

The image shows the front cover of an old book. The cover is decorated with a marbled paper pattern featuring large, irregular, light greenish-grey spots on a dark brown background, with thin, branching red lines. The spine of the book is visible on the left, bound in dark, worn leather. A small white rectangular label is affixed to the bottom left corner of the cover. The label is divided into two horizontal sections by a thin line. The top section contains the handwritten number '234' and a small blue checkmark. The bottom section contains the handwritten number '312'.

234 ✓

312



2000

700

Լայ

312

Յ 300



ԶՈՒՆԵՐՃԵՐԸՆՈՒԹԻՒՆԻՔ

Բ Ե Լ, Ե Կ Ի Բ Ե Վ, ԻՅՅԿՈՎՅ

Պաշտական զուարճախօսին Կայսեր Ռուսաց

Մեծին ՊԵՏՐՈՍԻ:

—

Թարգմանեց

Ռուսաց Լեզուէ,

Եւեռի\* Խաղեղեանց:



1858

Ս. ՊԵՏՐՈՒՐԳ.

Ի Տարանի Կայսերական Ճեմարանի Վերսեմանց:

1858.



*Handwritten scribbles at the top of the page.*

30723-22

**ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ:**

Согласно отзыва, читавшаго сію рукопись на Армянскомъ языкѣ, Г. Адъюнктъ-Профессора Бероева, съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Ценсурный Комитетъ узаконенное число экземпляровъ. С. Петербургъ, 17 Февраля 1858 года.

Ценсоръ В. Бекетовъ.



312-2003

(4845  
38)

29-312

(13828-58)

8

## ՅԼՈՒԶԱԲԱՆ

Ռուսսիաբնակ Հայերուն ծանօթ է Տալա-  
կիրեվի անունը : Սա Ռուսաց կայսեր՝ Մեծին  
Պետրոսի պալատական զուարճախօսն էր, որ  
իւր խելայի և հանճարեղ կատակներով ոչ թէ  
միայն թագաւորի զուարճութեան և սքսանաց  
առիթ կ'լինէր այլ և շատ անգամ նորա սաս-  
տիկ բարկութեանը և տխրութեանը և նոցա  
վնասակար հետեանքին՝ փարատիչ ու խափա-  
նարար և նորա տէրութեան և հպատակաց օգ-  
տին՝ պահպանող : Բայ յայսմանէ՝ նորա ազդու-  
և խորիմաստ կատակները՝ ծաղրածութեան հետ  
պարունակելով իւրեանց մէջ շատ բարոյական  
սկզբունք ճշմարտութեան ջատագով էր, սը-  
տութեան ու անիրաւութե՛ յանդիմանիչ, դրժ-

բաղդից և տառապելոց սպաւէն. նաև որոնք  
ուխտագրուժ կամ ապերախտ էին գտնուած  
նորան՝ քաջ զիտէր նոցա վրէժխնդիր լինել:

Տալակիրևը ծնած էր միջակ վիճակում բայց  
նորա բարերարը Մեծն Պետրոս տուեց նրան  
ազնուականութեան տիտղոսը. սիրելի եղև թա-  
ղաւորի աչքին. համարձակ ելումուտ կանէր  
պալատ՝ թագաւորի, թագաւորական տոհմին և  
մեծամեծացր բարձակից և խօսակից լինելով:  
Քանի որ կենդանի էր Պետրոս կայսրն՝ Տա-  
լակիրեւը բախտաւոր էր և համարեա թէ ոչ  
մի բանի կարօտութիւն չ'ունէր. բայց կայսեր  
վախճանելուն յետ՝ նորա բաղդի անիւը այլ  
կոյմ ման եկաւ, քանզի եկաց այլ Եսայիայի որ ու  
Բիւրի շէնքէ: Վասն որոյ Տալակիրևը բա-  
տիպուեցաւ իւր կեանքի մնացորդը յետին տա-  
ռապանաց և աղքատութեան մէջ վճարել: (')

---

(') Այն ապեհն էր որ Ոստոսոց պատճառ-  
ման մէջ կ'ստուէր՝ «Տիրոհեան ժամանակ» : Ինչոն էր  
Պատիւ Քրիստոսեանցի, որ Աննայ Աստուածածտի ինք-  
նակաւորութեան ժամանակ՝ որեքութեան Երայրձայի կառավար-  
ելի էր : Ինչն Բողոք մեխնէ՞, ահօրէն և Եսայիայի



Ի այց այսու ամենայնիւ նորա խմաստալից  
զուարճաբանութիւնքը անմահացուցին նորա  
անունը Ռուսաստանի մէջ և ամենաճախ ժա-  
մանակը չ'կարցաւ անոնք հետախաղաղ ծածկել :

Սորա զուարճաբանութիւններից աւելի  
ախորժելիները աւելորդ չ'համարեցինք՝ Հայե-  
րէն աշխարհիկ թարգմանութեամբ ընծայել  
մեր ընթերցասէր եղբարցր և կ'ուսամք որ մեր  
այս փոքր աշխատութիւնը՝ ընդունելի լինի  
նոցա, մանաւանդ նոցա կարգալը և հասկա-  
նալը զիւրերու համար այս գրքի ետև գը-  
րինք համառօտ բառարան այն նպատակաւ՝  
որ Ռուսաստանի Հայերը բառ մեծի մա-  
սին խօսակցութեան մէջ շատ Ռուսերէն և  
Տաճկերէն բառեր գործածելով անոնց Հայե-  
րէն բուն նշանակութիւնը ամենևին մոռա-

---

Տարբ' ստեղծել ան ու երկէւր յգած եր Ե՛րուր Ռու-  
սաստանի վերայ, որ համարեա՛ լի Ռուսաստանի Փարս-  
տուն եր : Ուրեմն է՛նչ զարճանք, ե՛լի Ս'եծին Պե-  
րոսի սերելեն՝ Բաւաղներէն իւր կեանքը աստասպանօք կըն-  
սեր այնպէսի Եանակաւի յեանուս :

ցել են և չ'գիտեն : Ուստի պնդիսի բա-  
ռերը բացատրեցինք Հայերէն, Տաճկերէն և  
Ռուսերէն խօսքերով, որ ամենեցուն հասկա-  
նալի լինի :

Ը. Խողեչեանց :

1300

ԶՈՒՆԲԱՆՆԵՐԻ ՆՈՒԹԻՒՆՔ

ԲԱՆԱԿԻՐԱԿՈՒՄ:

2014年10月10日

10月10日

1.

ՎԱՂՐ, ԱՐԻ՛:

Մին ծառայած աստիճանաւորի չքաւոր այրի կին շատ ժամանակէ ՚ի վեր կ'երթայր Օտերակոյտ և կ'իսնդրէր որ իւր մարդու ծառայութե՛հ համար թողակ կարգեն իրեն, բայց նրան բաւականութի՛ն չէր տային ասելով այս սովորական խօսքը՝ Վաղր արե՛ հայրս: Վերջապէս կինը անձարացած՝ աղաչեց Ռալազիրեւիին այս մասին, և նա խոստացաւ օգնել այն տառապեալ այրի կնոջը: Միւս օր հազուց կնոջ վերայ սև հանդերձ և անոր վերայ կարեց թղթեայ տոմսակներ այս վերտառութեամբ՝ Վաղր արե՛, և այնպէս կանգնեցոյց կնոջը այնպիսի տեղ, ուր տեղաց պիտի

անցանէր թագաւորը : Արբոր թագաւորը եւ կաւ մտաւ պատշգամբը՝ տեսաւ այն կնոջ և իսկոյն հարցուց՝ այս ի՞նչ բանէ : Բալակիրներ պատասխան տուեց թէ՛ վաղը կ'իմանաս, Ա՛րքայ, այդ մասին : Ա՛յս ըոպէիս կամիմ իմանալ, կանչեց Սեծն Պետրոս : — Բալակիրներ ասաց՝ ի՛նչ անենք, մենք շատ բաներ կ'ուզենք, բայց ամեն բան մեր կտոկեցածի պէս չի լինիլ : դու առաջ մտիր ատեան, հարցո՛ւր Ատենադպրին, եթէ նա չ'ասէ քեզ՝ վաղը, այն ժամանակ իսկոյն կ'իմանաս թէ ի՛նչ կ'նշանակէ այդ : Պետրոս թագաւորը մտաւ Ծերակոյտ և որոտաձայն հարցուց Ատենադպրէն թէ՛ ի՛նչ կ'ինդրէ այն պրի կինը : Ատենադպիրը ահ ուղողով խոստովանեցաւ թագաւորի առաջև, որ այն կինը վաղուց կ'երթայ կուզայ, բայց ժամանակ եղած չէ՛ որ՝ այն մասին յայտնեն Նորին Սեծութեանը :

Սեծն Պետրոս հրամայեց, որ իսկոյն կատարեն նորա խնդիրը, և այս բանով շատ ժամանակ չէ՛ր լսվէր դատաստանատանց մէջ՝ «վաղը արի» :



2.

Բալակիրներ կապտէ Պլեշէէվին :

Թագաւորը՝ շատ բարկացած լինելով թաւրաս Պլեշէէվի վերայ, հրաման արտ որ գտնեն բերեն նորա և ինքն եկեղեցի գնաց պատարագ տեսնելու : Բալակիրներ ցանկալով ազատել Պլեշէէվին թագաւորի բարկութեն՝ թագաւորի անուամբ հրամայեց, որ ինչքան Ս. Պետերբուրգի մէջ ճաղաս : ( ) մարդիկ կան, ժողովեն բերեն և երբ որ բերին՝ կարգաւ կանգնեցոյց նոցա այն եկեղեցւոյ առաջև, ուր տեղ թագաւորը պատարագ կ'տեսնէր : Երբ որ սպասարագը աւարտեցաւ՝ Բալակիրներ հրամայեց

---

(\*) ПЛЕШИВЫЙ կնիակ (որպէս) : Բայց գետեւէ է՝ որ ПЛЕШИВЫЙ անուն թաւրաս Պլեշէէվ (Тарасъ ПЛЕШЕЕВЪ) շատ հոյ Իմանուէլեան ունի յերոսոսայ Եսիէս՝ « Կալ թաւրաս Կլեշէէվէն » — (ПОЛТОРАСТА ПЛЕШИВЫХЪ), որ կ'իշխանիկէ « Կարէւր յերոսոսայ ճաղասներ » Ուրիկ երկ թագաւորը կրասայել է Եսիէս թաւրաս Պլեշէէվէն՝ Բալակիրները կ'երթել է Կալիանալ էնը Ես Կարէւր յերոսոսայ ճաղասայ ճաղասիկ :

Ճաղատներուն գլուխները բանալ և եկեղեցիի դրան մօտ սպասել թագաւորին, որ եկեղեցիէն ելլածին պէս զարմացաւ այն տեսարանի վերայ և հարցուց թէ՛ այս ի՞նչ բան է: Ձեր Սէծուծիւնը՝ պատասխանեց Ռալակիրւնը՝ հրամայեցիք հաւաքել հարիւր յիսուն ճաղատ մարդիկ, բայց այնքան չ'կային, բոլոր Պետերբուրգի մէջ հազիւ զանուեցան իննսուն վեց հոգի այնպիսի անձինք, որոնք պատիւ ունիմ յանդիման առնել Ձեր Սէծուծեանը:

Թագաւորը շատ ծիծաղեցաւ այսօրինակ հրնարագիտութեան վերայ և թէպէտ տեսաւ Պլեշչէեւին, որ ապարանի մէջ ահ ու գողով կանգնած կ'սպասէր ինքեան, բայց չ'բարկացաւ և ոչ ինչ չ'արաւ նրան:

3.

Արդու պատասխան:

Մի մարդ հանդիպելով Ռալակիրւնին հարցուց նրան՝ դու ե՞րբ կ'մեռնիս յիմար: Պատասխան տուեց Ռալակիրւնը՝ չ'գիտեմ. բայց



կարծեմ որ քեզմէ յետոյ, որովհետև յիմար  
ներու ցուցակին մէջ քեզմէ շատ վար կ'զբա-  
նուիմ: Այն հարցանող մարդը ամօթից չգի-  
տէր թէ ինչ ասէ:



4.

Շատուց է որ Ռալակիրեվը յիմար է:



Մի ժողովը մէջ կային շատ աստիճանաւոր  
մարդիկ, որոնց մէկը ևս էր Ռալակիրերը:  
Ատոմանիի մէկը կամելով ծաղր անել Ռալա-  
կիրեւի վերայ, հարցուց նրան՝ Ռալակիրեւ՝  
շատուց է որ դու յիմար ես: Ռալակիրեվը  
պատասխանեց՝ այն օրէն վերի, որ օրէն դու  
խելքէդ զրկըվեցար, բայց ժամանակը ճշմարիտ  
ասեմ միտքս չէ: Բոլոր հիւրերը ծիծաղեցան  
այսպիսի ճարտար պատասխանին վերայ:



5.

5. Խորտակեալ արձան :

Յալակիրքը մի օր պալատականաց հետ խաղացած ժամանակը յանկարծ խորտակեց Արամազդ չաստուածին արձանը : Թէպէտ վայր նորա գլխուն եկիլ էր , բայց ամենեին հոգսին չէր : Առաջվանէ իմանալով՝ թէ ինչ ժամանակ թագաւորը պիտի անցնէր այն սենեակէն , հանեց նա շորերը և մերկ մարմնի վերայ լօղիկ ձգած Արամազդի նման՝ կանգնեցաւ խորտակած արձանի տեղը :

Պետրոս թագաւորը անցած ժամանակը չընկատեց՝ բայց յետ դառնալուն տեսաւ գետնի վերայ արձանի կտորտանքները , նայեցաւ պատուանդների վերայ և վարմացաւ :

Մի՞ զարմանար թագաւոր՝ ասաց Յալակիրքը՝ այդ քո արձանը ես խորտակեցի և նորա տեղ ես ինքս կ'կանգնիմ : Թագաւորը սկսած ծիծաղել և հրամայեց կոչել թագուհին իւր մօտ և պատմեց նորա Յալակիրքի արած նորանոր վաւեշտութիւնքը և նոքա երկուսը խիստ շատ ծիծաղեցան սուտ արձանի վերայ :

Աղերսագիր հաւի բերնէ :

Պետրոս Առաջինն մէկ ժամանակ յանձնել էր Մենշիկով իշխանին մի գործ. բայց նա հաւառակը ասելով՝ կ'հաստատէր թէ այն բանը կ'պատկանի այլ կերպ կատարել. թագաւորը յօժարեցաւ և այն գործի կատարումն թողուց ուրիշ անգամի : Այս վիճաբանութեան ժամանակը ներկայ էր Ռալակիրւք. նրան անախորժ երեցաւ որ իշխանը կ'համարձակէր թագաւորի առաջն վիճաբանել :

Միւս օր հաւաքված էին թագաւորի մօտ շատ երևելի իշխաններ, որոնց մէջ կայր և իշխան Մենշիքովը : Մեծն Պետրոս սկսաւ խօսել երեկվան գործոյ մասին. ոմանք իշխաններից համաձայն էին թագաւորին. իսկ ոմանք Մենշիկովի կողմն էին : Այդ միջոցին յանկարծ ներս մտաւ Ռալակիրւք, իւր հետ բերելով հաւ և մաղ՝ տասն կամ տասներկու ձուերով : Առանց մի բան ասելու՝ զրեց մաղը սեղանի վերայ, թողեց հաւը թագաւորի օտքի

տակ և տուեց նրան հաւի բերնէն աղերսագիր :  
Ըն աղերսագրի մէջ հաւը կ'բողոքէր ձուերու  
վերայ՝ այն մասին, որ նոքա իրեն չէին հնա-  
զանգիլ և բայ յայնմանէ կ'համարձակէին խրատ  
ևս տալ : Վասնորոյ և կ'խնդրէր՝ նոցա անլսողուէ  
համար ուղարկել խոհարարին մօտ՝ որ նոցա  
նից լաւ ձուածեղ շինէր :

Թագաւորը կարգաց աղերսագիրը առաջ  
միտքէն, յետոյ ձայնով և հարցուց թէ՛ խելա-  
ցի բան չէ՞ մի հաւի բերանէն խնդիր տալ :  
Բոլոր աւագանին սկսան ծիծաղել և խնդրի  
ճշմարտութեանը վկայեցին : Թագաւորը այն  
ժամանակ զուարճախօսութեան միտքը հասկա-  
նալով՝ աղերսագիրը տուեց Մենշիկովին և  
պատուիրեց ըստ այնմ՝ անվրէպ կատարել :



7.

Շ ա տ ա խ օ ս :



Մէկ պալատական հարցուց Ռալակիրեին  
թէ՛ արդեօք գիտես ինչո՞ւ կ'ցաւին իմ ատամ-  
ներս : Ընոր համար՝ պատասխանեց Ռալակի-

րեւը, որ դու անդադար անհանգիստ կանես  
նոցա լեզուովը: Պալատականը յիրաւի խիստ  
շատախօս մարդ էր, և պարտաւոր էր առանց  
պատասխանելու ուտել Ռալակիրեւի յանագը:




8.

Ռալակիրեւ Ծերին կազատէ:

Ծերերու (սենաթուր) մինը ընդդէմ թա-  
գաւորական արգելքի կ'մտնէր առևտրական կա-  
պակցութեանց (подряды) մէջ: Արկու անգամ  
թագաւորը ներեց նորա յանցանքը, բայց շա-  
հախնդիր իշխանը, թագաւորի ողորմութիւնը  
մոռնալով՝ չ'դադարեց նոր նոր վաճառներու  
մէջ մտնելէն, որոյ մասին վերջապէս մատնե-  
ցաւ արդար դատաստանի և դատաստանը վճռեց  
զրկել նորան աստիճանից և կալուածքից և ար-  
տասահմանել Սիբիր: Միայն մնացիլէր որ թա-  
գաւորը այն գատակնիքը հաստատէր:

Ողորմելէ կշիւանը, զգիտնալով թագաւորի  
օրինաց խանգարիչներու վերայ ունեցած խըս-



312-2003 (18454061) (13828-58)

տութիւնը, զնայ Ռալակիրևի մօտ և խնդրեց  
որ իրեն վերահաս պատուհասէն փրկէ՝ խոս-  
տանալով նրան, անոր փոխարէն շատ փող :  
Ռալակիրևը յօժարութեամբ յանձնառու եղաւ  
կատարել նորա խնդիրը :

Պետրոս Թագաւորը երբ կատարագրէր վը-  
ճիւղները՝ որոնցմով պիտի վճուվէր մարդկանց  
ճակատագիրը՝ ունէր այնպիսի սովորութիւն՝ որ  
եթէ դատակնիքը դիպուածով խանգարուէր Թա-  
նաքով կամ ուրիշ բանով, այն Աստուծոյ դա-  
տաստանը կ'համարէր դատակնիքը ոչնչացնելոյ  
համար և այնուհետև չէր ստորագրէր : Բաց  
յայնմանէ լաւ վերահասութիւն գործելու հա-  
մար կ'փակվէր սենեկումը և գործոյ ամեն մէկ  
հանգամանքներուն, որոնք որ առաջարկված էին  
նրան՝ հաստատութեան համար, երկար ժամա-  
նակ վերահասու կ'լինէր :

Արբոր գեկուցումն տուին Թագաւորին յի-  
շեալ Ծերի մասին նա արգելեց որ ոչ ովին  
թող չ'տան իւր մօտ և ինքն պարապեցաւ գոր-  
ծովը : Այդ ժամանակ սովորաբար կ'գտնվէր  
սենեկումը Թագաւորի սիրելի կատուն, որ այն  
տեղ միշտ սեղանի վերայ Թագաւորի դիմացը

կ'նատէր: Մալակիրներ այս հանդամանքները լաւ մտածելով բռնեց մի մուկն, առաւ մի թերթ թուղթ և գնաց դէպ ՚ի սենեակը: Հաւատա- ցուցանելով պալատական սպասաւորին, թէ ինքն զրկուած է թագուհիի կողմանէ խիստ հար- կաւոր գործոյ համար, գնաց մինչև այն սենեակի դրան մօտ, զգուշութեամբ դուռն բացեց, եր- կար նայեցաւ թագաւորին վերայ և երբ թագա-ւորը գործի վերահայեցողութիւնը աւարտած գրիչը ձեռքը առաւ՝ Մալակիրներ փոքր ինչ թող տուեց մկան, մուկն սկսաւ ճանկերով ճան- կրուտել թղթին վերայ: Կատուն բնական զգաց- մամբ իսկոյն մկան հոտը առաւ և վրդովեցաւ: Թագաւորը ինքը ևս վրդովեցաւ կատուի ան- սկնկալ շարժողութեամբը, կանչեց նորա վերայ և կատուն հանդարտեցաւ: Մայց մինչ թագա-ւորը կրկին անգամ ձեռքը գրիչին տարաւ՝ կրկին սկսաւ մկան և կատուի շարժումը և կրկին թա- գաւորը չ'կարողացաւ դատակնիքը ստորագրել: Վերջապէս թագաւորը սկսաւ գրել, այն ժամա- նակ Մալակիրներ արձակեց մկան սենեկի մէջ: Կա- տուն իսկոյն յարձակեցաւ աւարին վերայ, ճրագը և թանաքամանը սեղանի վերայ տապալեց և թողեց

վրդոված Թագաւորին խաւարի և բարկութեան մէջ. և ինքն Տալակիրներ փախչելով ազատեցաւ : Վերջապէս ճրագ բերին. ոչ ոյ կ'համարձակէր ճիկ հանել Տալակիրն յանագի մասին : Թագաւորը տեսնելով, որ թղթերը ազատեցած են իւղով և թանաքով՝ պատառեց անոնք և դատակնիքը ոչնչացուց : Միւս օր Օտերին յայտնեցին ներողութիւն :

9.

Վրէժխնդիր լինելը այն Օտերին :

Վերայիշեալ անցքէն յետոյ Տալակիրներ գնաց այն պատիժէ ազատուած Օտերի մօտ, որ նորամէն խոստացած վարձատրութիւնը ստանայ. բայց Օտերը ոչ միայն խոստմունքը կատարելէն հրաժարեցաւ՝ այլ սպառնացաւ ևս՝ նորա յանդուգն արարքը Թագաւորին յայտնել : Տալակիրներ վերաւորված, միտքը դրեց վրէժխնդիր լինել ապերախտին. և այս մասին թեզով բացվեցաւ յաջող դիպուած : Տալակիրներ իմանալով որ այն շահասէր իշխանը իւր ամարանո-



ցում պատրաստութիւն կ'տեսնէ՝ թագաւորի աւրած ողորմութիւնը տօնախմբելու, զնաց ապարան և տեսնելով թագաւորին յոյժ ուրախ և զուարթ՝ կեղծեց ինքն իրեն ցուցնել խիստ տխուր ու շփոթված: Թագաւորը նորա տեսածին պէս ասաց՝ ինչո՞ւ տրտում ես դու, երբ ես ուրախ եմ, իսկ ուրիշ ժամանակ մինչ ես գործերով պարապված և վրդոված կ'լինիմ՝ դու քօ խեղկատակութեամբ քր ճանձրութիւն ես տալիս:— Ի՞նչ պէս չի տխրիմ՝ թագաւոր, պատասխանեց Ռալակիրևը. ես քեզ այսքան ժամանակ կ'ձառայեմ բայց դու ինձ ո՞չ մի ողորմութեամբ մխիթարած չ'ունիս մինչ ուրիշներուն կ'պարգևես աստիճաններ, գիւղեր և դրամներ: — Ի՞նչ կ'ուզես հարցուց թագաւորը:— Պտեան արն ինձ ճանձերու վերայ իշխան. տո՛ւր ինձ հրովարտակ, որպէս զի կարող լինիմ առանց պատասխանատու լինելոյ զարնել սպանել ճանձերը՝ ուր որ կամենամ. — Թող լինի՝ Ռալակիրև սիրով կուտամ քեզ այդ ողորմութիւնը՝ ասաց թագաւորը և գրեց իւր ձեռքով հրովարտակ: Ռալակիրևը հրովարտակը առաւ զնաց իշխանի ամարանոցը, ուր ամենքը սեղան նստած ճաշ կ'ուտէին:

Բալակիրերը այն տեղ բոլոր հիւրերուն առաջև սկսաւ տանտիրոջմէն սահանջել խոստացած վարձատրութիւնը: Տանտէրը ոչ թէ միայն ուրացաւ այլ և սկսաւ յանդիմանել նորա, որ նա անկոչ համարձակիլ է զալ իւր մօտ: Այն ժամանակը Բալակիրերը հանեց զրպանէն խայիշը և անով սկսաւ զարնել սպանել ճանճերը ամեն տեղ թէ սպաներուն, թէ փսէներուն, թէ բաժակներուն և թէ հայելեաց վերայ: Իշխանը տեսնելով այսպիսի աւերանքը՝ հրամայեց իւր ծառաներուն բռնել և կապել նորա: Բայց Բալակիրերը ցոյց տալով՝ ճանճերու վերայ ունեցած իշխանութեան մասի՝ արքունական հրովարտակը՝ շարունակ կ'կոտորէր ճանճերը ամեն տեղ մինչև վերջապէս և տանտիրոջ վերայ ևս: Հիւրերը տեսնելով այս կատակը թեզով քակվեցան գնացին տուն. Բալակիրերը կուշտ ծիծաղելով թողեց սպերախտ իշխանին և գնաց: Միւս օր համբաւ ասարածվեցաւ թէ Բալակիրերը ցնորվելէ. այս բանը որ լսեց թագաւորը կանչեց Բալակիրեին իւր մօտ և նորամէն լսելով ամեն անցքը հրովարտակը ետ առաւ:



10.

Պահպելլով հնոցի մէջ՝ թագաւորին մտածու-  
թենից կ'հանէ:

—

Որուսաց զօրքը Նարվայի տակ կոտորվելուն յետ թագաւորը փակվեցաւ իւր սենեկում: Բաւակիրներ գիտէր որ այսպիսի դիպուածներում թագաւորին վերայ սաստիկ տխրութիւն կամ մեղամազձութիւն կուգայր՝ որը որ վտանգաւոր ցաւեր կ'պատճառէր նրան, բայց հնար չ'ունեւ լով մտնել նորա սենեակը ելաւ ապարանի տանիքի վերայ և այն տեղէն ինջաւ հնոցի ծրխնելուդի մէջ, այն հնոցին՝ որ թագաւորի սենեկումը էր: Այն տեղէն նկատելով թագաւորի դրութիւնը և տեսնելով որ նա նստիլէ սեղանի առաջև քամակը հնոցին և երեսը հայելիին արած՝ մրձոտեց իւր դէմքը ձանձախարիթով և գլխուն վերայ ցանեց մոխիր, երեսի պատկերը այլակերպեց և գլուխը հնոցէն դուրս հանեց այնպէս՝ որ երեսի պատկերը հայելիի մէջ՝ պետքէ ուղիղ ընկնէր թագաւորի առաջև: Թագաւորը արժողի վերայ նստած դարձաւ ետևը նայեցաւ

դէպ ՚ի դրան՝ կարծելով թէ մարդ մտած լինի  
առանց իւր հրամանի, բայց զուռը փակ էր .  
այն միջոցին Ռալակիրներ պահպնեցաւ : Թագա-  
ւորը չորս կողմ նայեցաւ և նորէն մտածութեան  
մէջ ընկղմեցաւ : Ա՛յլ կրկին երևցան հայելի  
մէջ՝ տարածած ձեռք, երկրնցուցած ոտք, յե-  
տոյ գլուխ նոր կերպարանքով, բաց բերանով,  
վանդակաձև ատամներով և զուրս հանած լե-  
զուով : Ա՛յսպիսի օտարոտի և փոփոխական ե-  
րևոյթքը վերջապէս հանեցին թագաւորին մը-  
տածմունքից : Նա կանչեց սպասաւորին և սկսաւ  
հարցանել նրան թէ՛ մարդ չէ՞ մտած սենեա-  
կում : Ասելով բացասական պատասխան և չը-  
հաւատալով սպասաւորին՝ հրամայեց նրան նայել  
տան բոլոր խորշիկները, որոնք սեղանի, բազ-  
մոցի և աթոռի տակ, պահարանի ետևը և հը-  
նոցի մէջ, թէ արդեօք չէ՞ պահուած մարդ այն  
տեղերում : Արբոր հաւատաց և միամիտ եղաւ  
որ ո՛չ ով չի կայ՝ համարեց նա այն երևոյթքները  
իւր երևակայութեան ծնունդ և կրկին պատուի-  
րելով սպասաւորին մարդ չ' թողնել իւր մօտ՝  
սկսաւ համրել սեղանի վերայ եղած թղթերը  
և սպա նորէն մտածութեան մէջ ընկաւ : Ա՛յլ

դարձեալ սկսան առաջվան երևոյթները և թա-  
գաւորը սկսաւ անոնք լաւ զննել: Արբոր ստոյգ  
իմացաւ որ այն երևոյթները մարդոյ անդամներ  
են՝ կարծեց թէ գող մտիլէ կամ գողութիւն  
անելու կամ իւր կեանքը վտանգելու համար:  
Կանչեց սպասաւորին հրամայեց նորէն նայել  
հնոցի մէջ. բայց Ռալակիրներ այնպէս ճարտա-  
րութեամբ պահուած էր անոր մէջ, որ ըսպա-  
սաւորը այն տեղէն դատարկածեռն ելաւ և կը  
երգուէր որ հոն ո՛չ ով չ'կայ: Թագաւորը չ'հա-  
ւատալով նրան խոնարհեցոյց գլուխը հնոցի մօտ,  
հրամայեց որ՝ ով և լիցի այն տեղէն դուրս ելլէ  
խոստանալով ներել. և ընդ հակառակն կ'սպառ-  
նայր հրացանահար առնել, պատասխան չ'կար-  
երեք անգամ կրկնելէն յետ իւր խոստմունքը՝  
հրամայեց սպասաւորին հրացանահար առնել,  
բայց հրացանի ետեւէն լսվեցան խառն ՚ի խուռն  
օտարոտի ձայներ: Թագաւորը իմացաւ և ծի-  
ծաղելով ասաց՝ երևի այդ Ռալակիրեն է: Այն  
րոպէին Ռալակիրներ ելաւ, թագաւորին ոտքը  
ընկաւ գանգատելով՝ որ սպասաւորը թող չի  
տալ իրեն հանգիստ քնել:

11.

Եղ ջերաւոր անասնոյ միջոցաւ մտածմունքից  
հանելը:

—

Թեպէտ նախընթաց յանագով Ռալակիրներ  
հանեց թագաւորին մտածմունքից՝ բայց չ'կա-  
րողացաւ կատարելապէս փարատել նորա մթա-  
գին խորհուրդները: Արբոր իմացաւ որ թա-  
գաւորը նորէն փակվիլէ սենեկում, ուրիշ հնար  
մտածեց: Թագաւորը իւր խորհրդածութեան  
ժամանակ լսեց եղ ջերաւոր անասնոց պոռալը,  
գնաց պատուհանի մօտ և տեսաւ կովերու և  
ցուլերու բազմութիւն՝ եղ ջերներուն վերայ  
թղթեր կապած: Աւ երբ թագաւորը հարցուց  
թէ՛ այս ի՛նչ չորքոտանիք են, Ռալակիրներ  
պատասխանեց թէ՛ քո հպատակները են, խըն-  
դրագիր բերել են Պերմանացւոց վերայ, և տուեց  
թուղթը, որի մէջ գրած էր „Մենք ներքոյ  
ստորագրեալքս արտասուօք կ'ըողոքեմք Պեր-  
մանացւոց վերայ, որոնք անխնայ կ'ուտեն խոտ  
և բանջար, որը որ Մ<sup>Ժ</sup> մեզ ցուլերու, եղներու  
և ուրիշ անասնոց կերակրելու համար ստեղծիլէ,

խակ Գերմանացիքը այն ուտելով կ'զրկեն մեզ Այբարու թենէն. բայց յայսմանէ իրենց հպարտութեամբը՝ ընդդէմ սրբազան գրոց՝ բանջարը եղերդ կ'անուանեն: Մենք ևս մեծ երկիւզի մէջ եմք, որ այդ խոտաճարակները բազմանալով Ռուսաստանի մէջ կ'ուտեն բոլորը ինչ որ դաշտերում կ'ըռսանին, ուստի մենք պետք է սովամահ լինինք, վերջապէս խոտին ևս ձեռք դարկին: Ուրեմն հայր՝ ողորմէ մեզ: Արանեալ է որ կ'ողորմի անասնոց“:

Այս անսովոր խնդիրը այնպէս զուարճացոյց թագաւորին, որ նա քանի օրեր՝ քանի որ կրտեսնէր Գերմանացի աստիճանաւորներուն նոցա հետ յանազներ կ'անէր:

12.

Ինչո՞ւ յիմարին գրամ չի պիտի:

Մի անգամ Ռալակիրեր՝ Պետրոս թագաւորի սենեկումը լինելով ասաց նրան՝ թագաւոր՝

տուր ինձ հինգ դահեկան պետքիս համար: —  
Ի՞նչ հարկաւոր է քեզ դրամ՝ հարցուց թա-  
գաւորը. դուն չէիր, որ կ'ասէիր թէ՛ խելօք և  
յիմար մարդկանց փող հարկաւոր չէ՞ զերէ նոքա  
չ'զիտեն թէ ի՞նչ է կարօտութիւնը: — Այդ  
ճշմարիտ է բայց դու տուր ինձ փող, ես քեզ  
կ'ստուգեմ որ Ռալակիրներ սուտ չ'ասիլ: — Ահա  
սա և ստուգէ: - Ռալակիրներ փողը առաւ ու  
ասաց՝ մենք խելօք ու յիմար եմք, չ'զիտեմք  
կարօտութիւն այն մասին, որ հարուստները՝  
մեր կարօտութեան ժամանակը մեզ կ'օգնեն  
ինչպէս և դու այժմ արիր:

Թագաւորը այն ժամանակ ասաց՝ այո՛ այո՛  
քո ասածը ճշմարիտ է. ահա քո փողերը սա  
և գնա: — Այո՛ այո՛ ես կ'երթամ և եթէ քեզ  
կամ ինձ հարկաւորութիւն լինի՝ դարձեալ կու-  
գամ. այս ասելով Ռալակիրներ զնաց հեռացաւ:



13.

Սուտ մեռնիլը Ռալակիրեն :

—

Թագաւորը մի օր Ռալակիրենի վերայ շատ նեղացած լինելով վարեց նորա պալատէն դուրս և հրամայեց նրան չ'երևնալ իւր աչքին առաջեւ : Ընար չի կար, պետք էր հնազանդիլ և նա գնաց հեռացաւ : Անցաւ մէկ շաբաթ, եկաւ երկրորդ շաբաթը, բայց Ռալակիրենը չէր երևնար պալատումը և Թագաւորը առանց նորա սկսաւ ձանձրութիւն զգալ : Անցան այլ ևս երեք շաբաթք՝ յանկարծ լսվեցաւ որ Ռալակիրենը մեռիլէ : Թագաւորը այն բօթալի համբաւը ստուգելու համար մարդ խրկեց նորա տունը : Մարդը ետ դարձաւ յայտնեց Թագաւորին թէ՛ ինքն ինչպէս իւր աչօք տեսաւ Ռալակիրենին սեղանի վերայ պառկած և թէ ինչպէս նորա կինը կուլայր կ'ողբայր նորա մասին :

Ախոս, խեղճ Ռալակիրեն՝ ստաց Թագաւորը, նա ինձ կ'սիրէր և ինձ հաւատարիմ էր. պետքէ օգնութիւն անել նորա կնոջ, և խօյոյն իւր սպասաւորին խրկեց կոչել այրի կնոջը : Ակաւ

Բալակիրեւի սգաւոր կինը սև հագած, լայն և  
ընդարձակ շորերով (') ըստ սովորութեան այն  
ժամանակի :

Թագաւորը ցաւակցութեամբ խօսեցաւ փոքր  
ինչ նորա հետ և ասաց՝ ո՛վ որ յարութիւն տայր  
Բալակիրեւին շատ բան կուտայի :

— Ի՛նչքան կուտայիր՝ ասաց մէկ մը գե-  
րեզմանական ձայնիւ :

— Ի՛նչ է այդ . մի՛ թէ դու կենդանի ես՝  
խարզախ . կանչեց թագաւորը :

— Ո՛չ, ես մեռիլիմ :

— Հա՛, դու այստե՞ղ ես . դուրս ել թե-  
ղով :

— Ո՛չ, չեմ ելլել . իմ կին տուն դնա :

Ասցիր ասաց թագաւորը . քեզ կուտամ հա-  
րիւր դահեկան :

Բալակիրեւը գլուխը դուրս հանեց՝ լայն շո-  
րերի տակից : — Ա՛խոստանամ քեզ ներումն՝  
կրկնեց թագաւորը : Բալակիրեւը աւելի երե-

---

(\*) ФИЖМЫ մէկ տեսակ շոր է կանանց, որը որ կենճար  
դէնը՝ եսեանց շրջադէտտի ասիլէն կ'աւագնեն՝ ոսկորեայ  
շրջանակերով պիտաժ ու քիչ լայնաժ :

ւեցաւ : — Տոլոր առաջվան ի՛նչ ողորմութիւն  
ներբս... : Այն ժամանակ Տալակիրները ձաթկե-  
լով դուրս ելաւ, ընկաւ թագաւորի ոտքերը .  
յետոյ ելաւ ու ասաց՝ հարիւր դահեկանը ետ  
ան՝ թագաւոր՝ անոր համար որ դու ինձ յի-  
մարիս կենդանացուցիր . բայց ուրիշ ողորմու-  
թիւններդ տուր ինձ :



14.

Ճշմարիտ է թէ ոչ :



Մի մարդ ուղեւորով Տալակիրներին շփոթեւ  
և ամաչեցնել շատ մարդոց առաջև, հարցուց  
ճրան՝ Ճշմարիտ է արդեօք որ պալատումը  
քեզ համար կ'ասեն թէ դու յիմար ես : Բայց  
Տալակիրները պատասխանեց՝ սիրելի՛ մի՛ հաւա-  
տար նոցա, նոքա կ'սխալին. միայն մարդ կը  
բամբասեն, նոքա շատ բան կ'ասեն. նոքա քեզ  
համար ևս կ'ասեն թէ՛ դու խելացի մարդ ես.  
բայց չ'հաւատաս նոցա, կ'աղաչեմ չ'հաւատաս :



15.

Նամակ ուղարկելը:

Սեօն Պետրոս մի օր բարկացած լինելով Ռալակիրևի վերայ և ուղեւորվ նորան պատժել՝ առաւ թուղթ և գրեց պահակերաց սպայի վերայ, որ նա այն գրաբերին լաւ պատժէ: Յետոյ կանչեց Ռալակիրևին և հրամայեց նրան այն թուղթը տանել ուր հարկն էր: Պալուփորձանքը զգաց Ռալակիրևի սիրտը, իւր հեռատես զգոնութիւնը օգնութիւն կանչելով ելաւ ապարսնէն դուրս և ճանապարհին պատահելով մի պալատականի համոզեց նորան, թուղթը՝ սպային տանել, հաւատացնելով նորան՝ որ ինքը ուրիշ յանձնարարութիւններ ունենալով չէ կարող տանել: Պալատականը հաւատաց նրան, առաւ գիրը, տարաւ և քիչ մնաց որ պիտի ծեծ ուտէր: Բայց որովհետև Ռալակիրևը նորա ետևէն կ'երթայր, երբոր սպայն հրամայեց գրաբեր պալատականին պատժել՝ այն ժամանակ եկաւ Ռալակիրևը և թագաւորի անուամբ ասաց որ թագաւորը այն պալատականին ներեց և հրամայեց ազատել:

Սպայն թագաւորի հրամանը կատարեց. Ռալակիրներ ետ առաւ գիրը և տուեց պալատականին և հաւատացնելով նորան որ յատուկ թագաւորի կամքը այսպէս էր՝ պատուիրեց նրան երթալ ընկնել Արքայի ոտերը և տուած ներողութեան համար շնորհակալ լինել:

Պալատականը անպակաս կատարեց Ռալակիրի հրամանը. իսկ թագաւորը իմանալով իւր սիրական զուարճախօսի յանազները՝ շատ ծիծաղեց նորա խորագիտութեանը:



16.

Կարմիր ձու կամ հաւկիթ:



Ռալակիրներ մէկ օր հրաման խնդրեց թագաւորէն, որ երթայ ընակի իւր նոր կալուածումը: Թագաւորը թող տուեց նրան միայն այն սրայմանով որ թեզով գառնայ, սակայն սրայմանէլ ժամանակը անցաւ, դեռ նա պալատումը չէր երևնար: Ռալակիրներ դիտնալով՝ որ թագաւորը անպատճառ մարդ կ'ըլլէ իւր գալը իմա-

նալու համար՝ պատրաստեց դազաղ, դրեց սե-  
ղանի վերայ, պառկեցաւ անոր մէջ և տան  
մարդոցը ապսպարեց, որ երբոր թագաւորի կող-  
մանէ մարդ գայ՝ լան և ասեն թէ՛ երեկ վախ-  
ճանեցաւ: Պետրոս թագաւորը յիրաւի մարդ  
զրկեց Տալակիրների տուն. եկող մարդը տեսաւ՝  
որ բոլոր տունը արտասուաց մէջ էր. ափսո-  
սաց և դարձաւ յայտնեց թագաւորին թէ՛ Տա-  
լակիրներ մեռիլէ. և թէ նա նորան տեսաւ սե-  
ղանի վերայ դազաղի մէջ դրած: Թագաւորը  
շատ ափսոսաց նորա մահուանը: Լնցաւ քանի  
ժամանակ, վերջապէս մօտիկցաւ Օւտիկի օրը:  
Տալակիրներ պատարազի ժամանակ եկեղեցի դը-  
նաց, թագաւորի աթոռի առաջև ծունկ չոքած  
կեցաւ. փոքր ինչ յետոյ թագաւորը եկաւ ե-  
կեղեցի, տեսաւ նորան, բայց չ՛ճանչցաւ ո՛վ  
լինելը. և թէպէտ զարմացաւ նորա յանդգնու-  
թեանը՝ բայց չ՛ուզաց անհանդիստ առնել նորան  
մինչև ժամերգութեան աւարտիլը, և երբ պա-  
տարազը աւարտեցաւ Տալակիրներ ինքն մօտ  
գնաց թագաւորին, հանեց զըպանէն ներկած  
ձուն և ասաց «Քրիստոս յարեաւ Դի մեռելոց  
թագաւոր. Քո Հայրդ քեզ անդի աշխարհէն

հաւկիթ զրկեց“ : Թագաւորը և բոլոր պալատականքը շատ զտրմացան այս բանին վերայ :

17.

Այլ ու հաց կեր, բայց ճշմարիտ լե՛ր :

Մէկ ազնուական ցանկալով պաշտօնի մէջ մտնել՝ դիմեց Ռալակիրեւին և խնդրեց՝ որ նա ջանք անէ այն մասին : Ռալակիրեւը յօժարեցաւ և ազնուականը շնորհեց նրան տասն դահեկան : Քանի ժամանակից յետ այն ազնուականը յիրաւի պաշտօնում հաստատուեցաւ և թեզով ցուցուց իւր շահասիրութիւնը : Ռալակիրեւը ուզելով այս բանը թագաւորին յայտնել, սպասեց յարմար ժամանակի . և մէկ օր ճաշի ժամանակ իշխան Մենշիքովի տանը, ուր թագաւորը ևս կար, մօտ դնաց այն ազնուականին և սկսաւ համրել, ետ տալ տասն դահեկանը ասելով «այլ ու հաց կեր, բայց ճշմարիտ լե՛ր . քո դահեկանները իմ հողուոյս վերայ կեցած են . խնդրեմ ետ առ անոնք“ :

Աղնուականի երեսը կարմրեց և դրամները ձը-  
գեց Ռալակիրևի օտքի տակ :

Այժմ իմ խիղճս մաքուր է և հանդարտ՝  
ասաց Ռալակիրևը դրամները ժողովելով . Ռու-  
սի մէջ հին առած կայ, որ կ'ասէ՝ «ինչ որ ձգեն  
այն պետք է ժողովել» : Մի թէ ճշմարիտ չէ՝  
Թագաւոր . բայց եթէ ես դատարկագլուխ մարդ  
լինէի, ո՞ւր տեղէն պիտի առնուի տասն դահե-  
կանը :

Բոլոր հիւրերը սկսան ծիծաղել . բայց աղ-  
նուականը դատապարտվեցաւ պատժի :



## 18.

### Կարմիրը Լեզու :



Պարսից հետ եղած պատերազմը վերջանա-  
լուն յետոյ՝ պալատականներից շատերը ուղե-  
լով Ռալակիրևի վերայ ծիծաղել կ'հարցանէին  
նորա թէ նա այն տեղ ի՞նչ տեսաւ, որ ի՞նչ հետ  
ծանօթացաւ և ի՞նչ գործով պարապեցաւ :  
Բայց Ռալակիրևը սուս կ'կենար չէր պատաս-  
խանէր : Մէկ օր պալատական իշխանաց մինը՝



Թագաւորի և մեծամեծաց ներկայութեանը հարցուց Ռալակիրեին «դու Պարսից լեզու գիտե՞ս» :  
— Շատ լաւ գիտեմ՝ պատասխանեց Ռալակիրեը : Թագաւորը և բոլոր աւագանին զարմացան . բայց Ռալակիրեը խօսքը կ'կրկնէր թէ՛ գիտէ : Հապա ի՞նչպէս է այն լեզուն, հարցուց Մենշիքով իշխանը . պատասխան տուեց զուարճախօսն «ինչպէս որ քո լեզուն, այնպէս ալ այն կարմիր է :

19.

Սապատ՝ մէջը հաւկիթներով :

Մին պալատական բոլորովին առանց ընդունակութեան, իւր հնարքով վերջապէս հասաւ այն տեղ, որ Թագաւորը խոստացաւ նրան բաւական մեծ պաշտօն : Ռալակիրեը առ ժամանակ սուս կեցաւ . այլ երբոր Թագաւորը հրամայեց պալատականին գալ իւր մօտ վճռողական հաստատութեան մասի, այն ժամանակ Ռալակիրեը բերեց մէկ սապատով հաւկիթներ՝ նստաւ այն սապատի վերայ Թագաւորի նախա-

սենեակումը : Արբոր պալատականը եկաւ և  
խնդրեց՝ որ իմաց անէ թագաւորին իւր համար՝  
Տալակիրները չ'յօժարեցաւ կեղծելով թէ՛ ժա-  
մանակ չ'ունի, բայց շատ որ խնդրեց պալա-  
տականը՝ առաջարկեց նրան իւր տեղը նստել :  
Պալատականը միամտութեամբ նստաւ . Տալա-  
կիրները մտաւ թագաւորի սենեակը, բռնեց նորա  
ձեռքէն՝ հանեց նախասենեակը և ասաց, տե՛ս  
Ա՛րբայ, դու որին պաշտօն տալիս ես : Ա՛յս  
որ տեսաւ թագաւորը՝ չ'տուեց պալատականին  
խոստացած տեղը :

20.

Իւր ազգականը պատժէ կ'ազատէ :

Տալակիրների մերձաւոր ազգականից մինը՝  
ընկաւ թագաւորի բարկութեան տակ : Թագա-  
ւորը նորան դատաստանի տուեց և հաստատեց  
նորա դատաւիճիւրը : Տալակիրները տխուր դիմօք  
գալիս է . թագաւորը իմանալով նորա գալստեան  
պատճառը՝ դարձաւ ասաց ատենակալաց՝ ես  
առաջվանէ գիտեմ թէ՛ ինչու համար գալիս է

Նալակիրները իմ մօտ • բայց հաստատ կ'խոստա-  
նամ չ'կատարել այն, ինչ որ նա պիտի խնդրէ  
ինձմէն: Այն միջոցին Նալակիրները մօտեցաւ  
Թագաւորին և ասաց՝ կ'աղաչե՛մ Թագաւոր՝ մի՛  
ներիր այն անպիտան ազգականիս: Այն խաբէբայ՝  
կանչեց Թագաւորը • ի՛նչպէս խաբէցիր ինձ, և  
միւս օր ներողութիւն տուեց Նալակիրնի դա-  
տապարտեալ ազգականին:



21.

Նալակիրները իւր կնոջ կ'ներկայացնէ Թագու-  
հին:



Կայսրուհին խիստ ցանկացաւ տեսնել Նա-  
լակիրնի կնոջ և խնդրեց՝ որ իւր հետ ծանօ-  
թացնէ: Նալակիրները խոստացաւ կատարել մի  
յարմար միջոցով: Մի օր Թագաւորը Թա-  
գուհիի սենեկում լսեց անսովոր աղաղակ կա-  
նանց՝ և հետաքրքրութենէ ստիպուած մտաւ  
Թագուհիի սենեակը: Ուր տեսաւ Նալակիրնի  
կնոջը իւր Թագուհւոյ մօտ: Նորա երկուսը  
միմեանց հետ կ'խօսէին՝ կանչելով որքան կա-

րող էին : Թագաւորը զարմանալով հարցուց իմացաւ Թագուհիէն՝ որ Ռալակիրեւի կինը տաւրաբախտաբար խիստ խուլ է և թէ այդ պատճառաւ Թագուհին ստիպուած է նորա հետ բարձրաձայն խօսել : Այդ միջոցին Ռալակիրեւի կինը երբ տեսաւ՝ որ Թագաւորը Թագուհիին հետ կ'իսօսի կամաց սովորական ձայնիւ՝ զարմացաւ և գլուխ զարնելով Թագուհիին խնդրեց ներողութիւն, որ նա իւր աղաղակաւը անհանգիստ արաւ նորան : Այդ բանի պատճառը իմ այրս է՝ ասաց. նա ինձ հաւատացուց թէ՛ Ձեր Մեծութիւնը շատ պինդ էք ականջում և սաստիկ պատուիրեց ինձ՝ Ձեր Մեծութեան հետ խօսած ժամանակիս չ'իմայել ձայնս : Թագուհին նոյնպէս իւր կողմանէ յայտնեց թէ՛ Ռալակիրեւը նոյն խակ բանը ասաց նրան իւր կնոջ մասին՝ և շատ ժամանակ չ'յօժարեցաւ բերել նորան վախնալով Թագուհիին անհանգիստ անել, զերէ պիտի կանչելով խօսէր նորա հետ : Թագաւորը և Թագուհին շատ ծիծաղեցան իւրեանց սիրական զուարճախօսի այնպիսի յանազին վերայ :

22.

Տալակիրներ իւր կնոջ կ'պատժէ:

—

Ամենուն յայտնի է՝ որ Մեծն Պետրոս օտար երկիրներ եղած ժամանակին ուրիշ զէտութիւններէ զատ՝ կ'պարապէր բժշկական արհեստով ևս, և կ'սիրէր ատամներ հանել: Մի օր Տալակիրներ իւր կնոջ հետ մի բանի համար կռիւ անելով՝ միաքը դրեց որ նորա պատժէ մէկ յարմար և յաջող դիպուածում: Տալակիրներ տխուր դիմօք զնաց թագաւորի մօտ, որ իսկոյն նորա տխրութիւնը տեսնելով՝ հարցուց թէ՛ ինչո՞ւ այդպէս տրտում ես դու: Այս թագաւոր, վաղուց է որ իմ կնոջ ատամները կը ցաւին և սաստիկ կ'չարչարեն նորա: Քանի անգամ աղաչեցի նորա, որ նա հանել տայ այն ցաւած ատամը, բայց նա իւր կամակորութեամբը չի յօժարեցաւ: Աս նորա կ'ազատեմ չարչարանքից, ես ինքս կ'հանեմ ցաւած ատամը՝ սասց թագաւորը: Ո՛չ թագաւոր, պատասխանեց Տալակիրը, նա քեզ ամենևին չի լսիլ. այնպէս յամառ ու կամակոր է, որ Աստուած

ազատէ : Աթէ այդպէս է, մենք նորա բռնութեամբ կ'ըժշկենք՝ ասաց թագաւորը : Արժանի չէ նա՝ որ դուք թագաւոր աշխատ լինիք նորա օգտի համար . պատասխանեց Նալակիրելը : Ինչ և իցէ պետք է նորա ազատել այդ տանջողական ցաւէն՝ ասաց թագաւորը, առաւ իւր հետ զործիքները և Նալակիրևի և երկու սպասաւորաց հետ միասին դնաց կեղծեալ հիւանդին տուն՝ և երբ ներս մտաւ . ասաց թագաւորը Նալակիրևի կնոջ՝ ես եկայ ազատել քեզ ատամնացաւից, որ կ'չարչարէ քեզ և ցաւած ատամը հանել . կինը սկսաւ երդում անել որ երբէք իւր ատամները ցաւած չեն . բայց թագաւորը կարծելով այն՝ կամակորուծեան նըշան . հրամայեց իւր սպասաւորներուն բռնութեամբ նստեցնել նորա՝ աթոռի վերայ և բռնել որ նա չ'կարնայ տեղէն շարժիլ . յետոյ հարցուց Նալակիրևին թէ՛ ս'ր ատամը կ'ցաւի . Նալակիրևը ցոյց տուեց ամենից առողջ ատամը . թագաւորը խկոյն մէկէն քաշեց հանեց այն ցոյց տուած ատամը և սկսաւ մխիթարել կնոջը թէ՛ ցաւը թեզով կ'անցնի : Փոքր ժամանակից յետոյ իմացվեցաւ Նալակիրևի խորա-

մանկ հնարքը : Թագաւորը և Թագուհին խիստ  
շատ ծիծաղեցան :



23.

Թագաւորի պարգևած մուշտակը կ'վաճառէ  
պալատականին :



Մէկ ժամանակ Տալակիրներ երկար ատեն  
Թագաւորի բարկութեան տակը էր՝ և չէր հա-  
մարձակէր նորա աչքին երևնալ. թէպէտ և  
կայսրուհին միջնորդ և բարեխօս էր նորա հա-  
մար : Մի օր Թագաւորը սեղան նստած և շատ  
զուարթ գոլով՝ միտքը բերեց Տալակիրներն և  
ասաց՝ ախոս ո՞ր Տալակիրներ այս տեղ չ'կայ .  
մեր ժողովը թերևս աւելի զուարճալի կ'լինէր :  
Այս խօսքը ասած չ'ասած՝ յանկարծ եկաւ Տա-  
լակիրներ : Արբոր Թագաւորը տեսաւ նորա՝  
մոռացաւ իւր բարկութիւնը և ուրախութեամբ  
նորա սեղան նստեցոյց : Տալակիրներ իւր յա-  
նազներով՝ ազգու և խելացի ճարտարամտու-  
թեամբ այնչափ զուարճացոյց Թագաւորին, որ  
նա շնորհեց նրան իւր սեպհական թանկագին  
մուշտակը :

Միւս օր պալատականներէից մինը զմայլելու վայն մուշտակի վերայ, և դիտնալով՝ որ Ռալակիրներ փողի կարօտութիւն ունի, առաջարկեց նրան՝ այն մուշտակը իրեն վաճառել: Ռալակիրներ յօժարեցաւ: Արբ պալատականը հարցուց նորա զնոյ մասին, նա պատասխանեց թէ՛ ես թանկ չեմ առնուլ, իւր զնովը կուտամ քանի որ առիլիմ: Աւ երբ պալատականը կ'ուզէր փողը հատուցանել՝ Ռալակիրներ առաւ գաւազանը, սկսաւ զարնել պալատականին և հաշուել հարուածքները: Պալատականը նախ և առաջ սկսաւ ինքն զինքը պաշտպանել և ապա ձգեց փախաւ. բայց Ռալակիրներ ետեւէն երթալով շարունակ կ'զարնէր և կ'համրէր մինչև որ պալատականը հասաւ տուն, ներս մտաւ և վրայէն դուռը փակեց:

Միւս օր մուշտակ զնողը բողոք տուեց թագաւորին. թագաւորը կանչեց Ռալակիրներն և բարկութեամբ հարցուց թէ՛ ի՞նչպէս նա համարձակիլէ աղմուկ շփոթ հանել պալատումը և ձեծկվել: Ամենեին ո՛չ, Չերդ Մեծութիւն՝ այն յօժարակամ պայման էր՝ անվեհեր պատասխանեց Ռալակիրներ: »Այն մարդը կամե-



ցաւ ինձմէ զնել այն մուշտակը՝ որը որ դուք  
երեկ ինձ պարզելիլ էիք. ես կամեցայ նորան վա-  
ճառել այն զնով՝ ինչ զնով որ ես ստացիլ էի.  
նա անոր յօժարեցաւ: Չերդ Սեծութիւն՝ միտք  
արէք որ դուք այն մուշտակը չպարզեա՞ծ յա-  
ռաջ՝ Չեր սեպհական ձեռամբ տուիք ինձ երե-  
սուն հարուածք. այն մասին և ես նորա քամա-  
կին և կողքին սկսայ համրել իւր զինը՝: Թագաւո-  
րը բարձրաձայն ծիծաղեց այն կորուլամիտ հնարա-  
գիտութեանը. բայց նորա պատժելու համար  
հրամայեց որ մուշտակը պալատականին տայ:  
Այն ժամանակ Ռալակիրը ասաց՝ Թագաւոր  
դու որքան անհանգիստ կ'լինիս և կ'նեղանաս  
քո օրէնքները չ'կատարելուն համար. բայց  
դու ինքդ ոտնակոխ կանխ: Ի՞նչպէս՝ ասաց  
Թագաւորը: — Հասկա դու ինձ երեսուն հա-  
րուած տուիր. իսկ ես հազիւ կարողացայ տասն  
եօթը համրել. ուրեմն թող նա ստանայ ինձմէ  
մնացած տասներեքն ալ, յայնժամ ես անտրը-  
տունջ մուշտակը նրան կուտամ: Քո ասածը  
լինի՝ ասաց Թագաւորը. բայց պալատականը հրա-  
ժարեցաւ մուշտակէն ալ, հարուածքէն ալ:  
Ռալակիրը մինչև իւր մահը կ'հազնէր այն

մուշտակը, թագաւորի արգարութիւնը և ողորմութիւնը գովելով:

24.

Արքունի գանձարանը կ'պահպանէ:

Մէկ օր մի իշխանի տան երեկոյեան խընջոյքի մէջ՝ Պետրոս թագաւորը զուարթ լինելով՝ չափազանց պարզեւներ խոստացաւ հանդիսականներուն և բաղմականներուն. որին գիւղ, որին փող կամ այլ պարզեւներ և հրամայեց նոցա՝ միւս օր դալ իւր մօտ խոստացած բաները ստանալու համար: Առաւօտուն երբ զարթեցաւ թագաւորը՝ միտքը բերեց իւր խոստմունքը և սաստիկ փոշմանեցաւ. կ'ափսոսայր գանձարանին՝ բայց ճար չի կար, խոստացիլէր. թագաւորի խօսքը՝ խօսք էր, ինչպէս որ ինքն կ'ասէր, և սաստիկ անքաշելով՝ նստիլէր մտածելով: Ի՞նչ բանի համար անի կ'անիս՝ թագաւոր, հարցուց Տալակիրը՝ երբոր մտաւ նորա սենեակը: Իմ անմտութեան համար, պատասխանեց թագաւորը՝ և պատմեց Տալակիր

բեւին իւր արած առատաձեռնութիւնը : Միայն  
այդ է, դորա համար հոգս կ'անիս : Մի հո-  
գար թագաւոր . ինձ ապաւինիր՝ ես քեզ կ'ա-  
զատեմ, ասաց Ռալակիրներ :

Յետոյ թեզով առաւ Ռալակիրներ դանակ,  
քանի մի մորչ և նստաւ սենեկի դրան առա-  
ջեւ : Այն տեղ նստած կ'երգէր, կ'սուլէր և  
դէպ ՚ի պատշգամբը կ'նայէր : Արբոր մինը  
լնջոյքի հանդիսականներէից գալիս էր թագա-  
ւորին մօտ՝ Ռալակիրներ կ'առնուր դանակը և  
կ'սկսէր տաշել մորչը և ծայրը սրացունել : —  
Այդ ինչ է արածըդ՝ հարցուց մի մարդ եկող :  
— Կ'սրացունեմ ծայրը՝ ասաց Ռալակիրներ :  
— Ինչո՞ւ համար է՝ կրկնեց մարդը : — Ռա-  
լակիրներ պատասխանեց՝ անոր համար որ, ով  
որ անցած ու գնացած բաները յիշէ, այս մոր-  
չով նորա աչքը կ'հանին :

Ամեն եկողները հասկացան Ռալակիրնի ա-  
սածին միտքը՝ և չ'համարձակեցան երթալ թա-  
գաւորի մօտ խոստմունքը միտ ձգելու համար :



25.

Ազգաւը լաւ է Տաղէէն:



Կ'պատմեն թէ Տալակիրներ աւելի զուար-  
ճախօսութեան համար՝ քան թէ շահասիրու-  
թեան, խնդրեց կամ խլեց թագաւորէն մի քանի  
տուն շինականներ . և եթէ Տալակիրներ այս  
գիպուածում ցոյց տուեց փոքր ինչ շահասիրու-  
թիւն, նախընթաց մանրավէպի մէջ՝ իւր անձը  
պարտաւճար կացոյց թագաւորի գիմաց՝ ազա-  
տելով նորա մեծ մեծ և աւելորդ ծախքերից:

Պետրոս թագաւորը՝ կամեցաւ երթալ բա-  
ղէի որսի, հրաւիրեց իւր հետ Տալակիրներն և  
նա նշանակեալ ժամանակին եկաւ ձեռքումը  
ազգաւ բռնած: Այդ ինչ է հարցուց թագա-  
ւորը. մենք ամենքս բաղէ առիլինք, զու մի-  
այն ազգաւ բերիլիս քո հետ: Տալակիրներ  
պատասխանեց՝ այն մասի որ քո տէրութեան մէջ  
ազգաւները շատ բան կ'բռնեն՝ քան թէ բա-  
ղէները: Ի՞նչպէս կարելի է՝ ասաց թագաւո-  
րը: Տալակիրներ կրկնեց՝ ահա՛ կ'տեսնես. միայն  
ինձ խօսք տուր որ՝ ինչ որ բռնէ իմ ազգաւը՝  
բոլորը ինձ լինի: — Կուտամ խօսք, տեսնենք՝

ասաց թագաւորը : — Որսը շատ առատ էր .  
Թագաւորական բազէները կ'որսային իւրեանց  
աւարը . բայց Տալակիրնի ագռաւը նստիլէ՛ր՝  
նորա ձեռքի վերայ , քիթը կ'սրբէր և կ'կար-  
կաչէր : Այբոր որսը վերջ եղաւ , ամենքը ձեռ-  
քերը լիք գնացին , միայն Տալակիրը ձեռն  
ուռայն . Թագաւորը և բոլոր պալատականները  
սկսան նորա վերայ ծաղր անել և խնդալ :

Ի՛նչ առիւր , կ'ասէին պալատականները . շատ  
հեռու թռեա՛ր քո ագռաւի հետ :

Համբերեցէք տղայք , համբերեցէք՝ ասաց  
Տալակիրը . արեգակը դեռ մար մտած չէ :  
Այն միջոցին մտան մի գիւղ . Տալակիրը թը-  
ռուց իւր ագռաւը և շրտոյց նորան . ագռաւը  
թևերը խփեց ու նստաւ մի տան տանիքի վե-  
րայ , յետոյ միւս տան և ապա ուրիշ տան ետ :  
— Իմն է՛ իմն , կանչեց Տալակիրը ուրախու-  
թիւնէն : — Ո՛վ քոն է . ի՛նչ է՛ հարցուց թա-  
գաւորը : — Այս գիւղը . դու քո խօսքէն ետ  
չիս դառնալ թագաւոր , դու ասացիր՝ որ բո-  
լորը իմն կ'լինի ինչ որ ագռաւը բռնէ . առած  
կայ՝ »խօսք չ'տուած ամուլըցի՛ր , խօսք տալուդ  
յետոյ հաստատ կեցիր : — Այն անիծեալ՝ ա-

սաց թագաւորը • բայց ինչ անեմ զիւղը քոն է •  
Թագաւորի խօսքը՝ խօսք է : — Շնորհակալ  
եմ թագաւոր • հապա դուք ասէք ո՞վ շատ շա-  
հեցաւ • անդադար կ'հարցանէր Ռալակիրները  
պալատականներից՝ մինչև որ եկան հասան պա-  
լատ :



26.

Քաղաքապետին՝ թագաւորի բարկութենէն  
կ'աղատէ :



Պաւլովսք քաղաքումը, ուր պատրաստվում  
էր նաւահանդէս Նորվ առնելու համար՝ Պետ-  
րոս թագաւորը մէկ մեծ անկարգութեան մասի  
խիստ աւելի բարկացաւ քաղաքապետի վերայ  
և հրամայեց նորան կանչել իւր մօտ : Ռալա-  
կիրները զիտնալով՝ որ թագաւորի բարկութիւնը  
սաստիկ է, զանազան պատճառներով մնաց սե-  
նեկումը թագաւորի մօտ : Արբոր քաղաքապե-  
տը դրան մօտեցաւ՝ Ռալակիրները վազեց գնաց  
նորա վերան, գլորեց գետին և սկսաւ կոխել,  
տրորել և հայհոյել նորա • վերջապէս այս բա-

նով թագաւորի սիրտը ինջաւ . թագաւորը ինքըն սաստեց Ռալակիրեին : Այն ժամանակ Ռալակիրեը վեր կեցաւ , թողեց քաղաքապետին և սասայ՝ այժմ բաւական է . եթէ՛ թագաւոր , դու ինքդ ընկնէիր նորա վերայ՝ նա առանց կատակի՛ չէր մնար անվնաս . ես միայն նորա մազերը քաշեցի : Այս անցքէն յետ՝ թագաւորը խիստ հանդարտութեամբ յանդիմանութիւն արաւ քաղաքապետին :



27.

Ռալակիրեը կ'ազատէ Մենշիքով իշխանին :



Շատ անգամ իշխան Մենշիքովի շահախնդրութեան և կաշառառութեան մասին ամբաստանութիւն կ'անէին թագաւորի առաջ . բայց Մենշիքովի հանճարեղ խելքը , որ անհերքելի նպաստ էր թագաւորի տնօրէնութիւնները կոտարելու համար , նորա չափազանց երախտիքը , թագաւորի կեանքը ազատելը , չըկարողացան խոհեմ ինքնակալի աչքին՝ ծածկել Մենշիքովի մեծամեծ արժանաւորութիւնները :

և երախտիքը : Աթէ մեծն Պետրոս Ռրուտ  
գետի մօտ՝ յետին վտանդի մէջ չ'յօժարեցաւ  
կանտեմիր իշխանին Տաճկաց տէրութեան տալ՝  
մի՞ թէ ուրիշ հասարակ դրութեան մէջ կարող  
էր մոռանալ իշխան Մենշիքովի երախտիքը :  
Արախտագէտ մարդու առաջն ապերախտու-  
թիւնը դարձելի է : Բայց թագաւորը այս բա-  
նին ևս կատարելապէս միտ չէր դնէր, շատ  
անգամ անտանելի յանդիմանութիւններ կ'անէր  
իւր սիրական իշխանին, շատ անգամ ևս կը-  
պատժէր և վերջապէս նորա՝ Օտերակուտի դա-  
տաստանին տուեց : Այլաւ դատաստանի օրը,  
որ այնքան ծանր էր թագաւորի համար . տըր-  
տում և տխուր դիմօք հագվեցաւ թագաւորը՝  
որ երթայ Օտերակոյտ : Աղօթք արիւնք արդէն  
պատկերի առաջն, առաւ զլխարկը, վերջապէս  
և բիրը : Յանկարծ այն միջոցին ներս մտաւ  
Ռալակիրևը և քաշեց հանեց նորա ձեռքէն  
բիրը : Թագաւորը բարկութեամբ ձգեց հրա-  
ցայտ աչքերը Ռալակիրևի վերայ, բայց նա  
չ'վախեցաւ անկից և համարձակ թագաւորի ե-  
րեսին կ'նայէր : Բարկութեան տեղը զարմանք  
եկաւ թագաւորին վերայ. «Աս չեմ վախնամ



քո բարկութենէդ՝ լաւ միտք արն Մենշիքո՛վին\* . ասաց Ռալակիրեը և բիրը ձեռին հեռացաւ : Յայտնի է՝ որ թագաւորը ինչ արաւ Մենշիքովի դատաստանի ժամանակ . թող Աճանէ մեր դատաստանը՝ ասաց և այնպէս նորա դատաստանը վերջացաւ :



28.

Ռալակիրեը վրէժը կ'առնու Մենշիքով իշխանէն :



Ռալակիրեը որչափ ճարտարութեամբ՝ ազատել գիտէր ուրիշներուն և իրեն՝ թագաւորի բարկութենէն, այնչափ ալ աւելի կարող էր՝ ապերախտութեան համար վրէժխնդիր լինել : Յայտնի է որ Մենշիքովը թէպէտ հարուստ ու զօրաւոր մարդ էր, բայց նախանձոտ և կասկածոտ ևս էր . ո՛վ որ թագաւորին մտերիմ և հաւատարիմ էր, նա նորան կ'ատէր . նոյնպէս և Ռալակիրեին կ'ատէր, մանաւանդ նորա մասին կասկած ունէր թէ՛ նա թագաւորին առաջև ամբաստանութիւն կ'անէ՝ իւր ապօրինաւոր գործքերուն համար : Այս մասին Մենշիքովը միշտ կռիւ կա-

նէր Ռալակիրևի հետ և սաստիկ ատելութիւն ունէր նորա վերայ : Մէկ օր Մենշիքովը երգում արաւ Ռալակիրևէն վրէժը առնուլ ասելով՝ »լաւ, դու ինձ կ'յիշես, լաւ միտքդ պահէ" : — Շատ բարի՝ իշխան, պատասխանեց Ռալակիրևը, տեսնենք ո՞վ որին յառաջ կ'աղէ :

Ըսն օրը թագաւորի մօտ հացկերոյթ կար : Մենշիքովը ճաշէն յետ դնաց պարտէզը՝ որ թագաւորի տան մօտ էր, պառկեցաւ ծառի տակ հանդատանալ և քնեց : Ռալակիրևը նորա քնած տեսնելով ասաց՝ ահա լաւ դիպուած . կաց իշխան, դու ինձ կ'յիշես :

Ըսկից փոքր յառաջ բերել էին թագաւորին համար Հոլանտայէն ապակեայ փեթակ, որը որ նա դնել տուեց իւր պարտիզի մէջ և միշտ կուգայր զուարճութեամբ կ'նայէր, և այն շատ զգուշութեամբ ինչպէս իւր աչքի բերբ կ'պահպանէր : Ըստ բանը Ռալակիրևին յայտնի էր, նա միտքը դրեց այն փեթակը զոհել իւր վրէժը առնելու համար : Խորտակեց փեթակը, հանեց մեղր, մօտ դնաց Մենշիքովին որ խոր քնի մէջ էր, օծեց նորա բերանը մեղրով և ձեռքը դրեց մեղրի կոտոր . ինքը դնաց

նստաւ ծառի ետև և սկսաւ ճանճերը քշել :  
Շատ ժամանակ չ'անցաւ՝ թագաւորը մտաւ  
պարտէզ և ուղղակի գնաց դէպ ՚ի փեթակը :  
Երբոր տեսաւ՝ որ այն խորտակած է, վառուե-  
ցաւ անհնարին բարկութեամբ, սկսաւ պարտի-  
զի մէջ փրնտուել յանցաւորը . և այն ժամանակ  
տեսաւ Մենշիքովին պառկած՝ բերանը ձեռքը  
մեղրոտած : Իւր բարկութիւնը չ'կարողանալով  
սանձել՝ սկսաւ գաւազանով ծեծել իւր սիրա-  
կանին : Մենշիքովը զարթեցաւ : ելլաւ տե-  
ղէն և կ'կանչէր թէ՛ այս ի՞նչ բարկութիւն է .  
որ մեղքիս համար է : — Ահա՛ քեզ մեղր, ահա՛  
քեզ փեթակ՝ ասաց թագաւորը և գնաց : Երբ-  
որ թագաւորը հեռացաւ՝ Ռալակիրը ելլաւ  
ծառի ետևէն և ասաց «ի՞նչպէս է իշխան, ցա-  
ւեցաւ . հապա պետք չէր քեզ պարծենալ  
առաջ :



29.

Ռալակիրը շուն է :



Մի օր հարցուցին Ռալակիրին թէ՛ ինչո՞ւ  
քեզ շատ անգամ շուն կ'ատեն : — Այն պատ-

Ճառի՛ պատասխանեց նա՛ որ ես Միշտ քաղցր  
եմ և աննենդ հաւատարիմ նրան, ով որ ինձ  
բարերար է. և ընդ հակառակն սաստիկ կը  
խածնեմ նորան, ով որ ինձ կ'վշտացունէ: Ահա  
այս մասի է՛ որ ինձ շուն կ'ասեն և այն մասի  
ևս, որ ես ձեր վերայ կ'հաչեմ և տիրոջս կը  
պահպանեմ:



30.

Տալակիրևի վերայ բողոքը:




Բոլոր աւագանին և պալատականները Միշտ  
գանգատ կ'անէին Թագաւորին թէ՛ Տալակիրևը  
այնպէս՝ ինչպէս որ իրենք պալատ գալիս է  
երկու ձի լծած և երկու անուաւոր կառքով և  
կ'խնդրէին՝ որ այդ իրենց համար ցաւալի հա-  
ւասարութիւնը արգելէ: Թագաւորը խոստա-  
ցաւ այդ խնդիրը կատարել. բայց ի՛նչ: Միև  
օր Տալակիրևը եկաւ նստած սայլի մէջ, որին  
լծած էին երկու այծեր և առանց իմաց անելու  
մտաւ դահլիճը, ուր տեղ կային բազմութիւն  
իշխանաց: Թագաւորը ծիծաղեցաւ այն հնա-

րագիտութեանը, բայց որովհետև անախորժ հոտ էր զալիս այն կենդանիներու վրայից պատուէր տուեց՝ որ միւսանգամ չ'զայ այծերով:

Փոքր ժամանակէն յետոյ Թագաւորի պալատում ժողովեցան շատ աստիճանաւորներ, այն միջոցին յանկարծ զոները բացուեցան և Ռալակիրէր ներս մտաւ սայլի մէջ նստած, բայց ձիերու կամ այծերու տեղ՝ լծված էր իւր կինը:

Թագաւոր՝ այժմ չէ կարելի ինձ արգելել, որովհետև այս ձի չէ, այժ չէ, հապա ես, և միւսն իմ կինս է:

Տոլոր աստիճանաւորները ծիծաղեցան այնպիսի անսովոր տեսարանի վերայ, իսկ Պետրոս Թագաւորը՝ ընդդէմ իշխանաց կամքին՝ նորէն հրամայեց Ռալակիրէին պալատ գալ երկու ձի լծած, երկու անուաւոր կառքով:



31.

Ռալակիրները վրէժխնդիր կ'լինի մի մատաղամարդ պալատականի՝ նախատանայ համար :

—

Պալատականներից մին տղամարդ Ռալակիրներին սաստիկ նախատեց, անոր համար և նա միտքը դրեց նորամէն լաւ մը վրէժը առնուլ : Այն մատաղամարդ պալատականը չափազանց սիրահարված էր մի գեղեցիկ ազնուատոհմ օրիորդի վերայ՝ որ թագուհիին ֆրէյլինան էր (Фрейлина) : Ռալակիրներ սկսաւ ամեն կերպով հետամուտ լինել նրան, որ որպէս և իցէ կարողանայ նոցա մէջ անբաւականութիւն ձգել և տղամարդին օրիորդէն հեռացնել : Ռալակիրնի նպատակին բացաւ քաջայարմար դիպուած : Մատաղամարդ պալատականը Արքունական պարտիզի մէջ մեծնակ դբօսնելու ժամանակ՝ միտք կ'անէր և բարձր ձայնով կ'խօսէր իւր առ օրիորդն սիրոյ համար և իւր ցանկութեան մասին, որ մէկ պատուական ընծայով կարողանայր՝ իւր մտերմութիւնը՝ օրիորդին դիմաց հաստատել : Այսպիսի քաղցր խորհրդածութեան ժամանակ՝

տեսաւ ելակի նախախայծ պտուղը և ցանկա-  
ցաւ այն իւր տարփածուին նուիրել. ծածկեց  
իւր գլխարկը այն պտղոյ վերայ և վազեց զնայ  
պալատ՝ որ գտնէ իւր սիրական օրիորդը: Արբոր  
նա գնաց՝ Ռալակիրներ, որ հետամուտ էր նրան  
և կ'լսէր ինչ որ նա մտածմանց մէջ կ'խօսէր  
իւր սիրոյ համար առ օրիորդն՝ վազեց գնաց  
խահանոց, առաւ բաւականաչափ ջերմ խա-  
ւիծ (°), փետից գլխարկի տակի ելակը և անոր  
տեղ դրեց խաւիծը, ծածկեց նոյն գլխարկովը  
և գնաց պալատ: Շատ չ'անցաւ, սիրահարնե-  
րը եկան պարտէզ, մատաղաւուրց պալատականը  
յայտնելով իւր սիրոյ ջերմեռանդ զգացմունքը՝  
իւր տարփածուին մօտ տարաւ գլխարկին և հե-  
ծու թեամբ սրտի բացայայտելով նրան իւր հոգե-  
կան ցանկութիւնը թէ՛ ինքն նորա համար այն-  
քան գողտրիկ ու նազելի է՝ որքան իւր պատ-  
րաստած ընծայն, կ'ինդրէր օրիորդին առանց վեր  
առնելու գլխարկը՝ հանել ընծայն, որ անակն-

---

(°) Ռեապրի Գլխարկը էր ԿՄԱ, որ կ'ընտանակէ յարու-  
կէն: Կան արհույ կերակուր. Եայց այն որչա աւելի յար-  
ճար պետիւրվեցաւ՝ խաւիծը Եարգմանել:

կալ տեսութեամբ աւելի զարմանալի լինի ։  
Օրիորդը կատարեց նորա իղձը, խոթեց իւր  
գեղեցիկ ձեռքը գլխարկին տակ և ընկղմեց նո-  
րան խաւիժի մէջ և թեզով այն տեղէն հանեց  
ձեռքը և տեսաւ՝ որ այն մէկ անպիտան բա-  
նով աճրուված է ։ Անչափ բարկացաւ և աճրու-  
ված (ապականած) ձեռքովը՝ սաստիկ ապտակ  
տուեց իւր տարփածու պալատականի երեսին,  
որ յանդգնիլէր դժոխային կատակ անել ։ Այս  
միջոցին թագաւորը թագուհիի հետ՝ ուղեկցու-  
թեամբ Տալկիրեին եկաւ պարտեզ ։ Չէ կա-  
րելի ասել թէ՛ ինչ աստիճանի եղև սիրահար-  
ներու շփոթութիւնը և յուսահատութիւնը և  
թագաւորի և թագուհիի զարմանքը այնպիսի  
անցքի վերայ ։



32.

Կատակի փոխարէն՝ կատակ ։



Մի պալատական, ուղեւրով խենդացնել Տա-  
լկիրեին մէկ ժողովի մէջ՝ ասաց նրան «կ'ասեն  
թէ՛ քո կինը մկրտիլէ քեզ լուացքի ջրով» ։  
Այդ շատ բնական բան է՝ պատասխանեց



Տալակիրները առանց վրդովելու . որոտմունքէն  
(գոռումէն) և կայծակէն յետ միշտ անձրև կու-  
գայ . երեկ չէ՛ մէկալ օր , քո կինը իւր ձեռ-  
քով քո թուշերու վերայ բաւական գոռում-  
ներ արաւ , անկից յետոյ խմ վերայ ալ անձրև  
եկաւ :



33.

Տալակիրները վրէժխնդիր կ'լինի Սենեկապետին՝  
ապտակի համար :



Պետրոս թագաւորի սենեկապետներից մինը՝  
խիստ կարճատես էր , բայց ջանք կանէր ամեն  
կերպով իւր պակասութիւնը ծածկել : Տալա-  
կիրները միշտ կ'ծիծաղէր նորա վերայ . վասնորոյ  
մի օր ապտակ ստացաւ նորամէն : Տալակիրները  
միտքը դրեց այն մասին վրէժը առնուլ նորա-  
մէն : Մէկ գեղեցիկ գիշեր թագուհին և բոլոր  
արքունիքը գնացին զբօսնուլ գետի ափումը :  
Այն միջոցին Տալակիրները գետի միւս ափում  
տեսաւ , որ մի բաց պատուհանի մէջ՝ պառկած  
էր սպիտակ շուն «կտեսնէ՛ք պարօն Սենեկա-

պետ՝ հարցուց Ռալակիրները բարձր ձայնով՝  
— «Կ'տեսնեմ՝ պատասխանեց Սենեկապետը»  
— «Տայց կ'տեսնէք բաց պատուհանը երկրորդ  
յարկում» : — կ'տեսնեմ. — «ն՛վ է պատու-  
հանի մօտ նստած» : — «Կին է վիզը սպիտակ  
աղւուխ ձգած» : Հասարակաց ծիծաղելը բաւա-  
կան եղև Ռալակիրների վրէժխնդրութեան համար :

34.

Հ ե Ր ա թ ա փ :

Պալատի մէջ՝ նոր նշանակուած աստիճա-  
նաւորներից մինը, շատ հպարտ լինելով՝ չէր  
կարող Ռալակիրների կատակները ուտել : Սէկ  
օր սաստիկ բարկութեան մէջ՝ շատ աստիճա-  
նաւորներու ներկայութեան, ասաց «պալատու-  
մը յիմար մարդիկ շատ կան» : — Ընթան են՝  
պատասխանեց Ռալակիրները, որքան քո իմաս-  
տուն գլխի վերայ մաղեր կան : Պալատականը  
բոլորովին ճաղատ էր և ստիպուեցաւ սուս լի-  
նել, և անկից յետոյ՝ չէր համարձակէր Ռալա-  
կիրներին վերայ բան ասել :

35.

Ճնճղուկներուն հարցնելով՝ կ'ամաչեցնէ իշխաններուն :

Մի հանդիսաւոր օր Տալալիւրէը ճաշ ուտելու ժամանակ թագաւոր մօտ, ուր տեղ բոլոր մեծամեծները սեղան նստած էին՝ կ'հանէր իւր գրպանէն ճնճղուկներ և կ'հարցանէր նոցա «Որի՞ն ճնճղուկը ես, ուր տեղանք ես». և ինքըն հարցման պատասխանը կուտայր «Թագաւորական եմ». յետոյ պտտելով նոցա գլուխը ծառային տալիս էր՝ հրամայելով եփել, կամ տապակել, կամ բանդ դնել կամ զրկել սանահօր կամ սանամօր տուն և այլն : Աւ երբ պատասխան կուտայր թէ՛ այս ինչ պարոնի ճընճղուկը եմ՝ այն ժամանակ կ'փայտայէր, կը շփէր և մեծ զգուշութեամբ՝ որ մի փետուրը չ'որորեն, կ'հրամայէր թող տալ՝ արձակել :

Այսպիսի խորիմաստ կատակով և ազգու ճարտարութեամբ՝ մատնանիշ լինելով մէկ քանի յայտնի գործողութեանց վերայ՝ շատերուն, որոնք ներկայ էին՝ ստիպեց կարմրիլ, մանա-

ւանդ անոնց՝ որոնք կ'ըզային իրենց վերայ մէկ  
քանի Ռալակիրևի ասածին համեմատ մեղքեր:



36.

Մ ո վ ա պ ու ը ի :



Մի հարուստ օտարական մարդ կանչեց Ռալակիրևին իւր տուն ճաշկերուծի, ուր կային շատ մարդիկ՝ թէ այր և թէ կին: Սեղանի վերայ դրած էին քանի ամաններով զանազան ապուրներ (սուփ): Արբոր կարգով սկսան տալ ապուրները հետ զհետէ, այն ժամանակ Ռալակիրևը երբ մէկ ապուրէն կերաւ՝ հանեց վըզէն փողպապը, միւսը կերաւ՝ հանեց բաճկոնը, յետոյ կեղծամը, յետոյ ժիլեթը և այս կերպով շարունակ կ'հանվէր՝ մինչև այն տեղ հասաւ, որ ոտքերէն գուլպաները սկսաւ հանել: Արբոր կինմարդիկը այդ տեսան՝ չ'սպասեցին միւս շորերը հանելուն, ելլան սեղանէն դնացին: Տանտէրը այն ժամանակ բարկանալով Ռալակիրևի վերայ՝ ասաց «այդ ի՛նչ բան է, ինչո՞ւ այդպէս բաներ կանես»: — Այս կ'պատրաստուէի անցնել

այս սարսափելի ապուրի ծովէն. պատասխանեց  
Ռալակիրներ : Ռոլոր հիւրերը բարձրաձայն ծի-  
ծաղեցան և ելլան սեղանէն :

37.

Ի մ հ ո ղ ր :

Թագաւորը մէկ բանի պատճառաւ շատ բար-  
կացած գոլով Ռալակիրնի վերայ՝ սրտմտու-  
թեամբ ասաց՝ «գնա՛ դուրս իմ հողից՝ որ ես  
միւսանգամ չ'տեսնեմ քեզ» : Ղար չ'կար՝ Ռա-  
լակիրը հնազանդեցաւ, դուրս ելաւ Պետեր-  
բուրգէն և երկար ժամանակ չ'երեցաւ : Մի-  
օր Թագաւորը պատուհանի մօտ նստած էր,  
յանկարծ տեսաւ որ Ռալակիրը կառքով կ'անց-  
նէր իւր պատուհանի քովէն : Թագաւորը յի-  
շելով իւր առաջվան տուած պատուէրը՝ չը-  
կարողացաւ համբերել. վազեց գնաց պատըշ-  
դամբը և կանչեց «ի՛նչպէս կ'համարձակիս ան-  
զգամ՝ չ'հնազանդիլ իմ հրամանին և դարձեալ  
կ'քալիս իմ հողի վերայ» :

Ռալակիրը կանգնեցուց իւր ձիերը և ասաց՝  
«կամաց՝ կամաց՝ Թագաւորդ Ռուսաց երկրի .

ես քո հողի վերայ չեմ. ես չ'ուզեմ քեզ գըլուիս զարնել“:

— Ի՞նչպէս իմ հողի վերայ չես. կանչեց թագաւորը:

— Ահա նայէ՛ սայլի մէջ քո հողը չէ՛, այլ Շվէդի հող է: Աս դնեցի իմ փողովս՝ և եթէ չհաւատաս ինձ, ունիմ գրաւոր վկայական՝ որը որ հողը դնած ժամանակիս հանեցի: Յետոյ քշեց սայլը դէպ ՚ի պատշգամբ, ուր կայր թագաւորը. տուեց նրան վկայականը: Թագաւորը կարդաց այն թուղթը և խնդալով ասաց՝ «Ի՞նչ անեմ պետք է ներել“:



38.

Ի՞նչ զանազանութիւն կայ:



Մի օր Ռալֆակիրը շատ աստիճանաւորաց առաջև ասաց թագաւորին «Թագաւոր՝ գիտե՛ս ինչ տարբերութիւն կայ անիւի և փաստաբանի մէջ. այսինքն՝ այն փաստաբանին, որ անփոփոխ կապի: Մեծ զանազանութիւն կայ ասաց թագաւորը խնդալով, և եթէ այլ տեսակ ևս զա-

նագանութիւն կայ՝ ասան իմանամ: — Ահա կը  
ցուցնեմ թէ՛ ի՞նչ ասարբերութիւն կայ. մին  
ծուռ է, միւսը բոլորակ և երկուսն ալ պետքէ  
թեղ-թեղ իւղել, ապա թէ՛ ո՛չ. այնպէս ասս-  
տիկ կ'ճոճուան կ'զըռզըռան՝ որ Աստուած պա-  
հէ: Այս խօսքիս շատերը խնդացին թէպէտ  
նոցա համար խնդալու բան չէր, զերէ եթէ  
ուղղակի աչքին չէր նէ, յօնքին զարկած էր  
շատ ուղիղ:



39.

Ն մ ա ն ու թ իւ ն:



Իշխան Մենշիքովի տան խնջոյքի մէջ,  
շատ երևելի իշխանաց և աստիճանաւորաց ա-  
ռաջն՝ Ռալակիրևը հարցուց Մենշիքովին «Իշ-  
խան՝ դու գիտե՛ս կամ արդեօք ճշմարիտ է թէ՛  
անիւր և մեր դատաւորքը նման են միմեանց»: —  
Ի՞նչ մասի այդպէս՝ դու սուտ կ'ասիս: —  
Ո՛րք, ես սուտ չեմ ասել. փորձիր, մի՛ իւ-  
ղէր թէ անոնց և թէ ասոնց. տե՛ս այն ժամա-  
նակ նոցա զըռզըռալէն՝ ինչպէս ականջող կը-  
խուլանայ:



40.

Ղանճ ճակատի վերայ:

Մէկ ժողովքի մէջ՝ կայր բազմութիւն ամէն տեսակ մարդկանց՝ թէ արանց և թէ կանանց, որոնց մէջ կայր և Ռալակիրներ: Սա կամելով զուարճացնել այն բազմութիւնը՝ մօտ դնաց մի Պերմանացի քահանայի և հարցուց նորան՝ «Տէր հայր՝ մեղք չէ՞ արդեօք ճանճ սպանելը»: Քահանայն պատասխանեց թէ՛ այդ տեղ ի՞նչ մեղք պիտի լինի: Աս հրաման կուտամ այդ անպիտան կենդանին զարնել և սպասել, ինչ տեղ որ լինի: Քիչ ժամանակից յետ ճանճը նստաւ քահանայի ճակատին վերայ: Ռալակիրներ տեսնելով այն՝ մօտեցաւ նրան և առանց բան ասելու զարկեց ճակատին՝ այնչափ սաստիկ, որ շատ սենեակներու մէջ լսվեցաւ ձայնը: Բոլոր հիւրերը ծիծաղեցան՝ Ռալակիրքի այնպիսի խեղկատակութեան վերայ:



41.

Օգնութիւն կանէ մատաղամորդ պատկերա-  
հանին պատկերները վաճառելու համար :

—

Պետրոս թագաւորը կ'սիրէր շատ մատա-  
ղահասակ անձինք զրկել օտար երկիրներ, որ  
ճանապարհորդութիւն անեն և արհեստներ  
սորվենան : Այդպիսի անձանց մինը՝ սովորիւ էր  
շատ լաւ պատկերահանութիւն կամ նկարչու-  
թիւն : Նա նկարեց շատ ընտիր և գեղեցիկ  
պատկերներ և բերեց Ս. Պետերբուրգ՝ յու-  
սալով, որ այն պատկերները վաճառէ լաւ գը-  
նով. բայց բերած պատկերները՝ համարեա՛ն թէ  
ո՛չ ով չգնեց :

Պատկերահանը յուսահատութեան մէջ էր՝  
և չ'զիտէր թէ ի՞նչ անէ պատկերները :

Թագաւորը զբօսնելու ժամանակ կ'սիրէր  
մտնել զանազան արհեստաւորներու մօտ, և  
անձամբ անձին կ'նայէր նոցա գործքերը : Ինչ  
պէս մէկ օր մտաւ այն պատկերահանի խանու-  
թը, նայեցաւ նորա պատկերները. քաղցրու-  
թեամբ խօսեց նորա հետ և իմացաւ, որ ոչ

ով չ'գնել նորա պատկերները, որոյ պատճառաւ նա կարօտութիւն կ'քաշէր :

Թագաւորը վերաւորված հոգևով՝ հրամայեց պատկերահանին՝ միւս օր երեկոյեան դէմ գալ ժողովը (\*) և բերել պատկերները: Նշանակեալ ժամին եկաւ պատկերահանը. Թագաւորը իսկոյն կարգադրեց նորան օգնելու համար, որ նորա պատկերները հրապարակական վաճառմամբ՝ վաճառվի, և Ռալակիրեին նշանակեց՝ աւելցընող. բայց առաջ հրաւիրեց շատ իշխաններ՝ որ Ռուսաց նկարչի ճարտարութիւնը տեսնեն:

Յետոյ թեզով Թագաւորը յայտնեց հրապարակական վաճառք՝ Ռալակիրեը կանգնեցաւ սեղանի զիմաց և վաճառք սկսաւ :

Առաջ երեք հատ պատկերները վաճառվեցան փոքր գնով. սկսաւ չորսումը վաճառ-

---

(\*) Պետրոս Լեպուսի ժամանակ Ռուսաստանէն ժողով կ'լենէր, որ երեկոյները կ'հասաւելեն Եղևր Պեժմեժքը և Էշխանքը, շատ տեղամ ինչն Լեպուսի և ո՛ր պեյրո-Լեան օգտի և լեպուսի-Լեան վերաբերեալ Բաներո-վերայ խօսելու և խորհելու համար :

վիլ և գինը աւելցաւ : Բալակիրներ կ'կանչէր  
„մէկ . . . երկու “ . բազմութեան մէջէն լսվեցաւ  
Թագաւորի ձայնը „երեք հարիւր ուուբլի “ .  
Բալակիրներ կանչեց „մէկ . . . երկու՝ երեք “  
պատկերը Թագաւորի վերայ մնաց :

Վերջին հինգում պատկերը սկսաւ վա-  
ճառվիլ . Թագաւորը ասաց՝ „ո՛վ որ ինձ աւելի  
կ'սիրէ, նա կ'գնէ այդ պատկերը “ . գինը ելաւ  
մինչև հինգ հարիւր ուուբլի :

„Ութ հարիւր կուտամ “, ասաց Պոլովինը :

„Հազար“, կանչեց Աբրաքսինը :

„Երկու հազար“, աղաղակեց Սենշիքովը :

— Մի թէ ես ուրիշներէից փոքր կ'սիրեմ  
Թագաւորին՝ ասաց Բալակիրներ . կուտամ եր-  
կու հազար հինգ հարիւր : — „Երեք հազար“,  
կանչեց Վրուքովը : Թագաւորը նշան տուեց  
և Բալակիրներ ասաց՝ մէկ . երկու, երեք :  
Պատկերը մնաց Վրուքովի վերայ : Թագաւո-  
րը գնաց նորա մօտ, համբուրեց ճակատը և  
ասաց՝ շնորհակալ եմ քեզմէ և բոլորից, և այն  
տեղ պատուիրեց այն ջրմուղը՝ որը որ նա փո-  
րել կուտայր, անուանել Վրուքովեան ջրմուղ :

42.

Տալակիրներ յիմար է :

—  
Մի պալատական աստիճանաւոր ասաց Տալակիրներին՝ « դու յիմար ես » : — Այնպէս է պատասխանեց Տալակիրներ . քո ասածը ճշմարիտ է՝ եթէ հաւատանք տղէտ մարդոց և այն անձանց , որոնք չ'զիտեն առածը թէ՛ ինչպէս որ կանչես՝ անոր նման արձագանք կ'լսվի :

43.

Ղմարտութիւնը՝ աչք կ'ծակէ :

—  
Մի մարդ հարցուց Տալակիրներին՝ « ինչո՞ւ համար քեզ յիմար կ'ասին » : — Անոր համար որ՝ ինձ քեզի նման խելօքներից որոշեն . պատասխանեց Տալակիրներ :

44.

Քնելու օգուտը :

Պետրոս թագաւորը մի օր ասաց Ռալակի-  
րեին՝ «դու շատ քուն կ'լինիս յիմար, այն  
վնաս է առողջութեան» : — Ընդ հակառակը  
թագաւոր՝ այն առողջարար է և օգտակար :  
— Ինչո՞ւ համար : — Ընոր համար որ՝ երբ  
չեմ քնել, աշխարհի երեսին ման գալու ժա-  
մանակիս՝ կարող եմ շատ մեղքեր գործել .  
բայց քնիս մէջ ո՞չ ովին չեմ կարող վնաս տալ :



45.

Ռալակիրեի՝ պատկերահանին տուած խոր-  
հուրդը :



Մի անհմուտ պատկերահան միշտ կ'զովէր  
իւր պատկերահանութեան մէջ վարպետու-  
թիւնը և կ'ասէր թէ՛ ինքը քաջ արհեստա-  
գէտ է նկարչութեան մէջ : Մէկ օր նա պա-  
տահելով Ռալակիրեին՝ ասաց նրան «արի եղ

բայր իմ օթևանը, ես միտք ունիմ գործարանիս  
պատերը ներկել և յետոյ նկարել: Մալակի-  
րեին յայտնի լինելով նորա հմտութեան չափը՝  
պատասխանեց « իմ կարծիքով լաւ է այսպէս  
անել. նախ նկարել, ապա ներկել »: Ներկայ  
եղող մարդիկը շատ ծիծաղեցան այս խօսքին  
վերայ:

46.

Ամպի գոռալը՝ կարկուտէն լաւ է:

Մալակիւրեւը մէկ օր սաստիկ կռիւ արաւ իւր  
կնոջ հետ՝ այնպէս, որ այդ կռիւը մինչև պալատ  
հասաւ: Շատ մարդիկ կ'ծիծաղէին նորա վե-  
րայ: Արբոր այդ յանագները և ծաղրածութիւն-  
ները տաղտկացուցին նորան՝ Մալակիւրեւը մի  
պալատականի՝ որի կինը շատ անզգամ էր և  
միշտ ծաղր կանէր իւր մարդու վերայ, ասաց՝  
« սիրելի դու խնդա՛, խնդա՛. բայց մի՛ մոռանար  
որ՝ լաւ է ամպի գոռալը լսել, քան թէ կա-  
նանց բարկութեան կարկուտի տակ կանգնիլ,  
մանաւանդ այնպիսի կնոջ, ինչպէս որ քո սի-

րական կինը է և քո վերայ շատ անգամ կար-  
կուտներ կ'ըսուի՞” :

47.

Վ, ա Ղ Ը :

Մէկ աղքատ աստիճանաւոր՝ ներկայացաւ  
Պետրոս թագաւորին և խնդրեց՝ որ իւր աղ-  
քատութեանը և իւր ընտանեաց, որը որ մեծ  
կարօտութեան մէջ էին՝ օգնութիւն անէ : Թա-  
գաւորը նրան ասաց՝ „վաղը“ : Այն միջոցին  
Տալալիւրերը թագաւորի սենեկում լինելով՝ մօտ  
գնաց թագաւորին և ասաց՝ „եթէ վաղը քոն է  
թագաւոր, ապա մէկալ օրն ալ իմս է. մենք  
քեզ հետ հաւասար բաժին արիլինք, քեզ  
խելք՝ ինձ յիմարութիւն : Մարդս պետք է մի  
օր մեռանի. մեռնելէն յետոյ՝ դատաստան կայ“ :  
Թագաւորը այն ժամանակ մտածեց և անյապաղ  
բաւականութիւն տուեց խնդրագործին և Տալա-  
լիւրեին ասաց՝ „շնորհակալ եմ քեզ՝ որ ինձ  
մեղքէ ազատեցիր“ :

Բալակիրևը երկրաչափ է:

—

Մենշիքով իշխանը՝ Թադաուորի առաջին սիրականներից մին էր. նա ունէր տուն Վա սիլեվսկի կղզումը, թէպէտ միայարկ շինուած էր՝ բայց այն ժամանակ կ'համարուէր հոյակապ և ընդարձակ: Քովերը շինած կային երկայն երկայն տուններ, որոնց մէջ ժամանակաւոր կը բնակվէին օտարազգի դեսպանները: Թադաուորը ինքն գրեց այն սենեակներուն ձևը և կուգայր հետաքրքրութեամբ տեսնել շինութիւնը, որը որ արագ արագ առաջ կ'երթայր: Մի գեղեցիկ առաւօտ՝ Թադաուորը և Մենշիքովը կ'նայէին հիմն, որ արդէն աւարտելու վերայ էր: Յանկարծ տեսան՝ որ Բալակիրևը կանգունը ձեռքին կ'քալէր շինութեան մօտ՝ վստմական կերպարանքով, և ինքը իրեն դատողութիւն անելով կ'չափէր մի բան: Թադաուորը իւր մօտ կանչեց Բալակիրևին և հարցուց՝ «վաղ՞ուց է Բալակիրև որ դու երկրաչափ ես եղած. ինչ է չափածըդ»: — Երկրաչափ եմ



ես՝ այն օրէն սկսած, երբ սկսայ քալել այս  
գիճին հողի վերայ. թէ ի՞նչ բան է չափածս՝  
դու ինքդ կ'տեսնես: — Ի՞նչ է: — Հող  
է: — Ինչո՞ւ համար: — Այս կուղեմ այս հիմքի  
քով չափել, իմանսլ թէ՛ սրբան տեղ կ'բռնէ  
Մենշիքով իշխանը՝ երբոր մեռնի: Թագա-  
ւորը ժպտաց, նայեցաւ իշխանի երեսին, որ  
Բալակիրեի խօսքից կնճռեց գէմքը:


49.

Պալատական աստիճանաւորի կաշառակրծու  
թիւնը՝ կ'յանդիմանէ:

Պալատական աստիճանաւորը՝ որին յանձ-  
նուած էր սլալատի կերակրեղինաց վերայ հըս-  
կողութիւնը, իւր պաշտօնը չարաչար կ'վարէր,  
կաշառակեր էր և սկսիլէր աններելի արգիւնք-  
ներ ստանալ: Բալակիրեը այս բանը իմացաւ  
և ցանկալով միշտ թագաւորական գանձարանի  
ամբողջութեանը՝ յարմար միջոց համարեց թա-  
գաւորի իրեն տուած ճանճերու վերայ իշխա-  
նութեան հրամանը: Թագաւորի մօտ բոլոր

աւագանիի և իշխանաց համար հացկերոյթ եղաւ : Ամենքը սեղան նստան՝ բայց Տալակիրներ կ'քալէր և պատերու վերայ ձանձ կ'սպանէր : Կերակրեղինաց վերակացու աստիճանաւորը՝ կանգնած էր թագաւորի սեղանի քով : Տալակիրներ տեսնելով վերակացուի ճաղատ գլխոյ վերայ ձանձ, մօտեցաւ նրան՝ և այն բուռն զարկեց սպանեց ձանձը : Թագաւորը դարձաւ ետևը նայեցաւ և ամենքը իրենց ուշը դարձուցին վերակացուի վերայ, որ ամօթէն և սրտի նեղութենէն կարմրած էր : — Այդ ի՞նչ բան է, հարցուց թագաւորը Տալակիրներին : — Ո՛չ ինչ՝ Չեր Մեծութիւնը. ես իբրև վերակացու կամ իշխան ձանձերու՝ նոցանից մէկը պատժեցի, այն մասին՝ որ նա չ'զողանայ թագաւորական ուտելիքը : Թագաւորը ժպտաց՝ լաւ մը նայեցաւ աստիճանաւորի վերայ :

Այս անգքէն յետոյ՝ աստիճանաւորը թեզով դուրս ելաւ իւր պաշտօնէն :



50.

Սեղանաւորին ներելու համար՝ օգնութիւնը:

—

Տալակիրներ զիտէր՝ որ Պետրոս Թագաւորի սեղանաւորը իւր գործած մեծ յանցանքի համար Մտուած էր զինուորական դատաստանի և այն դատաստանը վճռիլէր, որ զրկեն նորաստիճանէն և ազնուականութենէն և զրկեն Սիբիր: Ղատակնիքը արդէն հաստատիլէր Թագաւորը, դատասպարտ սեղանաւորը շատ սղոյ տէր մարդ էր: Նորա մի որդւոյն Տալակիրներ շատ կ'սիրէր, այն մասին՝ որ նա ունէր գեղեցիկ դէմք, խելք և ճարտար լեզու. զնաց սեղանաւորի տուն՝ խորհուրդ տուեց որդւոյն, անյապաղ երթալ Թագաւորի մօտ: Նոյնպէս խրատ տուեց նրան թէ՛ ի՞նչ պետք է ասէր Թագաւորի մօտ՝ հօրը ներելու մասին: Յանցաւորի որդին մտաւ պալատ, Տալակիրներ թող տուեց նորան՝ ներկայ լինել Թագաւորին, տըղայն Թագաւորի ոտքերը ընկած կ'իսնդրէր՝ հօր ազատութեան համար: «Վիտեմ Թագաւոր՝ ապաց նա, որ իմ հայրը սրժանի է այն պատ-

ժին . բայց կ'իսնդրեմ Չեր Մ'եծութենէն՝ մէկ  
ողորմութիւն . ինչ պատիժ որ նշանակած է  
նորա համար՝ այն պատիժը իմ վրաս կատարեն :  
Հայրս ծեր և տարեց մարդ գոլով՝ չէ կարող  
տանել այն պատիժները . բայց ես առոյգ և  
առողջ եմ և շատ տաժանական աշխատութեան  
կարող եմ դիմանալ : Բաց յայսմանէ մայրս՝ հօ-  
րըս ապաբաղդութեանը չէ կարող դիմանալ .  
նա իմ դեռաւուրց եղբայրներու հետ միասին  
պիտի կորչի : Այն սղայի ծնողասէր պաղա-  
տանքէն՝ Թագաւորի գութը շարժելով՝ գրկեց  
և համբուրեց նորան և յետոյ ասաց՝ » ես հօ-  
րըդ կ'ներեմ , միայն անոր համար՝ որ նա այդ-  
պիսի որդի ունի . նորա իւր գերդաստանին կը  
դարձուցանեմ և քեզ կ'նշանակեմ այն պաշտօնի  
մէջ , որը որ մինչև ցայսօր քո հայրդ ունէր :  
Յուսով եմ՝ որ դու նորամէն լաւ կատարես  
քո պաշտօնը :

Բալակիրներ նախասենեակումը կ'սպասէր թէ՛  
ի՛նչ հետեանք կանէ յանցաւորի որդւոյն ա-  
ղաչանքը , որ աչքը արտասուենքով ուրախու-  
թենէն եկաւ և յայտնեց թէ՛ հայրը ներողու-  
թիւն ստացաւ : Բալակիրներ երբ լսեց՝ ուրախ

եղև և ասաց թէ՛ կ'յուսամ որ դու այս բանը միտքբղ կ'պահես, և պետք եղած ժամանակին Տալակիրեին չես մոռանալ:

51.

Փորձանքից ազատելուն յետ՝ խօսքը չ'կատարիլ:

Թագուհին մի օր Տալակիրեին մի հարկաւոր գործի ղրկեց: Այս բանը նոյեմբեր ամսոյն էր՝ երբ նոր սկսիւէր գետը սառիլ: Տալակիրեւը երթալու ժամանակ պետք էր կամուրջի վըրայով՝ գետէն անցնէր, բայց նա մօտիկ ճանապարհով գնաց սառուցի վրայէն, որը որ տակաւին բարակ և թոյլ էր: Գետի մէջ տեղ սառոյցը կտրեցաւ և Տալակիրեւը ջուրը ընկղմեցաւ: Ա՛րճնէր, կ'փաթըտուէր սառոյցներին՝ որ ջուրէն ելլէ. բայց սառոյցները ևս առաւել նորա ձեռքէն կ'կտրատուէին: Արբոր թալցաւ, զօրութիւնը գնաց սկսաւ կանչել «օգնեցէք, օգնեցէք. ես շատ փող ունիմ»: Նորա բաղ-

դէն մօտիկ տեղում արհեստատուն կար . արհեստաւոր մարդիկ վաղեցին եկան , տախտակներով և չուանով քաշեցին՝ հանեցին նորա գետտաիի վերայ , և կ'սպասէին խոստացած վարձադրութիւնը ստանալ : Բայց Բալակիրը ցրտէն դողալով՝ առամների մէջէն կասէր՝ « շնորհակալ եմ ձեզմէ տղայք , բայց փող տալ չեմ կարող՝ թէպէտ ունիմ՝ այլ իմը չէ , օտարի է . եթէ ուզենաք՝ նորէն տարէք ջուրը ձգեցէք ինձ » : Այս խօսքին բոլորը ծիծաղեցան , այլ նա զնաց մտաւ մէկ մօտիկ տուն , ուր փոխեց հանդերձները և տաքնալուն յետ՝ զնաց թագուհիի յանձնարարութիւնը կատարելու : Թագուհին նորա ուշանալու մասին բարկացաւ , այլ երբոր Բալակիրը պատմեց նրան պատահմունքը՝ թագուհին շատ ծիծաղեցաւ այնանցքի վերայ :



52.

Ռ Ո Ւ Ր Ա Ս Ս Ա Ն ։

Ռալակիրները կ'սիրէր կովեր պահել և շատ անգամ ինքն հողացողութիւն կ'անէր նոցա համար, մանաւանդ հորթերուն կ'սիրէր կերակրել։ Մի օր պարտէզ մտցուց հորթը, որ բաւական մեծցած էր և ծառերու մէջ կապելով՝ արձակեց արօտի վերայ. բայց չ'նկատեց թէ՛ չուանը հորթին միջոց կուտայր մէկ կողմանէ գեղեցիկ բուրաստանի մօտ երթալ։ Արեկոյեան դէմ երբոր տուն եկաւ՝ մտաւ պարտէզը, որ այն տեղէն հորթը հանէր՝ ինչ տեսաւ, հորթը կ'զբօսնուր բուրաստանի մէջ՝ և նորա մէկ ծայրը բոլորովին սրբիլէր, փոքրիկ ծաղիկները փետիլէր, հանիլէր և մեծերը կտրիլէր։ Այն ժամանակ Ռալակիրները ծաղիկներէն փունջ քաղելով՝ սկսաւ անով սաստիկ զարնել իւր քամակին և ուսերուն ասելով՝ « արօտ կեր՝ և ոչ թարմ ծաղիկներ և մի՛ կտրիւր մեծ ծաղիկ թուփերը »։ Ռալակիրնի կինը լսելով այս ազաղակը՝ վազեց եկաւ պարտէզ և տեսաւ՝

որ այրը անխնայ կ'զարնէր իրեն . բայց իւր մարդու խօսքերը նորա ուշը բուրաստանի վերայ դարձուցին : — «Այ անզգամ՝ այդ ի՞նչ բան է որ դու արիր . աւերեցիր իմ զեղեցիկ բուրաստանը՝ որի վերայ ես այնքան աշխատել էի . ամեն օր կ'տնկէի, աւելորդ արօտներից կ'սրբէի և կ'ջրէի, և դեռ նոր նոր բերելէի լաւ կարգի մը » : — Այն այդ մասին ես կը մտրակեմ իմ քամակը և ուսերը : — Ի՞նչ օգուտ քո քամակէն և ուսերից . ես շատ կ'ախտոսամ բուրաստանիս համար, այժմ հնար չի կայ կարգի դնել : Յետոյ կինը մի ըստ միոջէ լսելով՝ խիստ շատ ծիծաղեցաւ :

Վ.Ե.Բ.



13. Մտնուի ինչպէս ինչպէս . . . . . 30.  
14. Եւ ինչպէս ինչպէս . . . . . 31.  
15. Ինչպէս ինչպէս . . . . . 32.  
16. Ինչպէս ինչպէս . . . . . 33.  
17. Ինչպէս ինչպէս . . . . . 34.  
18. Ինչպէս ինչպէս . . . . . 35.

Յ Ա Ն Կ :

երես :

1. Վազը արի . . . . . 9.
2. Բալակիրներ կազատէ Պլեշչէկին . . 11.
3. Ազդու պատասխան . . . . . 12.
4. Շատուց է որ Բալակիրներ յիմար է. 13.
5. Խորտակեալ արձան . . . . . 14.
6. Աղերսագիր հաւի բերնէն . . . . . 15.
7. Շատախօս . . . . . 16.
8. Բալակիրներ Օերին կազատէ . . . . . 17.
9. Վրէժխնդիր լինելը այն Օերին . . . 20.
10. Պահպնելով հնոցի մէջ՝ Թագաւորին մը  
տաճութենից կհանէ . . . . . 23.
11. Աղջերաւոր անասնոց միջոցաւ՝ մըտած  
մունքէ հանելը . . . . . 26.
12. Ինչո՞ւ յիմարին դրամ չի պիտի . . . 27.

13. Սուտ մեռնիլը Բալակիրեն . . . . . 29.
14. Ղշմարիտ է թէ ոչ . . . . . 31.
15. Նամակ ուղարկելը . . . . . 32.
16. Կարմիր ձու կամ հաւկիթ . . . . . 33.
17. Ըղ ու հաց կե՛ր, բայց ճշմարիտ լե՛ր. 35.
18. Կարմիր լեզու . . . . . 36.
19. Սապատ՝ մէջը հաւկիթներով . . . . . 37.
20. Իւր ազգականին պատժէ կ'ազատէ . . 38.
21. Իւր կնոջ կ'ներկայացնէ թագուհին . 39.
22. Իւր կնոջ կ'պատժէ . . . . . 41.
23. Թագաւորի պարգևած մուշտակը՝ կը վաճառէ պալատականին . . . . . 43.
24. Ըրքունի գանձարանը կ'պահպանէ . . 46.
25. Ըգուաւը լաւ է բազէն . . . . . 48.
26. Քաղաքապետին թագաւորի բարկու թենէն կ'ազատէ . . . . . 50.
27. Կ'ազատէ Ս'ենշիքով իշխանին . . . . 51.
28. Վրէժը կ'առնու Ս'ենշիքով իշխանէն 53.
29. Բալակիրենը շուն է . . . . . 55.
30. Բալակիրենի վերայ բողոք . . . . . 56.
31. Բալակիրենը վրէժխնդիր կ'լինի մի մատակարար պալատականի՝ նախատանայ համար . . . . . 58.

32. Կատակի փոխարէն՝ կատակ . . . . . 60.
33. Վրէժխնդիր կ'լինի սենեկապետին՝ ապ-  
տակի համար . . . . . 61.
34. Հերթաթափ . . . . . 62.
35. Պնդուկներուն հարցնելով՝ կ'ամաչե-  
ցնէ իշխաններուն . . . . . 63.
36. Ծով ապուրի . . . . . 64.
37. Իմ հողը . . . . . 65.
38. Ինչ զանազանութիւն կայ . . . . . 66.
39. Կմանութիւն . . . . . 67.
40. Պանծ ճակատի վերայ . . . . . 68.
41. ()գնութիւն կ'անէ պատկերահասնին՝  
պատկերները վաճառելու համար . . . 69.
42. Բալակիրեւը յիմար է . . . . . 72.
43. Պշմարտութիւնը աչք կ'ծակէ . . . . . —
44. Քնելու օգուտը . . . . . 73.
45. Բալակիրեւի՝ պատկերահասնին տուած  
խորհուրդը . . . . . —
46. Լմալի դռուալը՝ կարկուտէն լաւ է . . 74.
47. Վաղը . . . . . 75.
48. Բալակիրեւը երկրաչափ է . . . . . 76.
49. Պալատական աստիճանաւորի կաշառա-  
կրծութիւնը կ'յանդիմանէ . . . . . 77.

50.	Սեղանաւորի ներելու համար օգնու թիւնը . . . . .	79.
51.	Փորձանքից ազատելուն յետ՝ խօսքը ձկատարել . . . . .	81
52.	Բուրաստան . . . . .	83.
53.	...	...
54.	...	...
55.	...	...
56.	...	...
57.	...	...
58.	...	...
59.	...	...
60.	...	...
61.	...	...
62.	...	...
63.	...	...
64.	...	...
65.	...	...
66.	...	...
67.	...	...
68.	...	...
69.	...	...
70.	...	...
71.	...	...
72.	...	...
73.	...	...
74.	...	...
75.	...	...
76.	...	...
77.	...	...
78.	...	...
79.	...	...
80.	...	...
81.	...	...
82.	...	...
83.	...	...
84.	...	...
85.	...	...
86.	...	...
87.	...	...
88.	...	...
89.	...	...
90.	...	...



Faint, illegible text at the top of the page, possibly bleed-through from the reverse side.

STRENGTH OF PLANTS

STRENGTH OF PLANTS

Faint, illegible text at the bottom of the page, possibly bleed-through from the reverse side.

## ՀԱՄԱՌՕՏ ԲԱՌԱՐՆԵ



- Ագռաւ . (խառղայ) . воронъ.
- Աղղու . շատ հասկանալի , սուր . рѣзкій, острый, поразительный.
- Աղմուկ . կռիւ , տարածայնութիւն . (խալմաղալ) . крикъ, шумъ, драка.
- Աղբրագիր . խնդիր կամ խնդրագիր . прошение, просьба письменныя.
- Ամբաստանութիւն . շիքիաթ անել , խամբել . доносъ.
- Այր . էրիկ մարդ , կենջ մարդ , էրիկ . мужчина, мужъ, супругъ.

Անակնկալ . չ'կարծած , թահմին չարած . не-  
ожиданный.

Անդամ . մարդու ձեռք կամ ոտք եւ . члены.

Անիւ . կողքակ կամ սայլի ակը . колесо.

Անկոչ . չ'հրաւիրված . незванный.

Անհերքելի . որուն դէմ չ'դրուիր . неопро-  
вергаемый.

Անյապաղ . խսկոյն , առանց ուշացնելոյ . не-  
медленно.

Անվեհեր . անվախ , աներկիւղ . неустрашимый.

Անվրէպ . անպակաս , լիովին . точно , совер-  
шенно.

Աշխարհիկ . աշխարհաբառ . популярный.

Ապարազդութիւն . անբազդութիւն . несчастье.

Ապակեայ . շիշայէ կամ ծամէ . стеклянный.

Ապարան . թագաւորի տուն , պալատ . (սա-  
րայ) . дворець.

Ապուէն . յոյս , օգնական . (կոնակ , եարամ ճի) ,  
надежда , убожище.

Ապտակ . (շամառ , սիլլայ) . оплеуха , пощечина.

Ապօրինաւոր . ընդդէմ օրինաց . противоза-  
конный.

Առած . խելացի խօսք կամ բան , հնոց կամ



նախնեաց գրոյց . пословица.

Առաջարկել . խօսք կամ խնդիր առաջն ձգել .  
предлагать.

Առոյդ . առողջ, կենճ . (ճահիլ) . юный, мо-  
лодой.

Ատամն . ակռա . зубъ.

Ատեան . դատաստան անելու տեղ . (տիվան  
խանէ) . присутствие.

Ատել . չ'սիրել, թշնամութիւն անել . нена-  
видѣть.

Ատենակալ . դատաւոր, ատենի անգամ . при-  
сутствующій.

Ատենադպիր . գրագիր, քարտուղար . секре-  
тарь.

Արագ . շուտ, (թեղ) . скоро.

Արհեստագէտ . լաւ արհեստ զիտցող . артистъ.

Արհեստատուն կամ արհեստակերտուած . գոր-  
ծարան . фабрика, заводъ.

Արձագանք . ձայնը իուրթմիշ լինելը . эхо, от-  
голосокъ.

Արձան . փայտէ կամ քարէ շինած մարդու  
պատկեր . статуя, бюстъ.

Արտասահմանել . քաղաքէն դուրս քշել .

(սիւրկիւն անել) . сослать.

Աւագայ . Թագաւոր . царь, государь.

Աւագունիք . բոլոր Թագաւորի տան մարդիկը .  
Дворъ, придворные.

Աւագանի . իշխանք, մեծամեծք . вельможи,  
придворные.

Աւար . (քէլէփիր) . добыча.

Ափսէ կամ ափսեայ . չինի, սահան . (Թէփսի).  
тарелка.

Բաղէ . (խրոզի) . соколъ.

Բաղմական . զիաֆէթ եկող մարդիկ . (միւսաֆիր-  
ներ) . пирующіе, пиршествующіе, собрание.

Բաղմոց . (սէտի, սէքի) . диванъ, софа.

Բաժակ . գաւաթ . стаканъ, рюмка.

Բաճկոն . կարճ շոր . (զըպուն) . фуфайка,  
камзолъ.

Բարձակից . պատուակից, աթոռակից, սեղա-  
նակից.

Բացասական . չէ ասած կամ ասելու (խոսք) .  
отрицательный.

Բացարձակ . ազատ, անկախ . независимый.

Բիր . հաստ գաւազան . (սօփա) . палка, дубина.

Բոլորակ . կլոր . круглый.

Բուրաստան . ծաղկոց . (չիչէքլիք) . ЦВѢТНИКЪ .

Բոթալի . մահաբեր , ողբալի , փո՛ բոթալի  
համբաւ . (ղարախաբար) . печальныя вѣ-  
СТИ .

Գանձարան . (խաղնայ) . казна .

Գիծին . թաց , (նէմ) . сырой .

Գլխարկ . գլտակ . шапка , шляпа .

Գողտրիկ . սիրուն . милый , нѣжный .

Գուլպայ . չուլքի , (չօրապ) . чулокъ .

Գործիք . (Թախում , ավատանլըգ . եարաղ) .  
инструменты , орудія .

Գրիչ . (ղալէմ) . перо .

Գրպան . (ձէք) . карманъ .

Գազաղ . մեռելի սուեդուկ կամ արկղ՝ ուր մե-  
ռած մարդու մարմինը կ'դնեն . гробъ .

Գահեկան . կոպէկ , կամ ուրբի .

Գահլիճ . զալ . зала .

Գաշտ . բաց կամ ամայի տեղի . (չէօլ)  
поле .

Գաստակերտ . ամարանոց . дача .

Գատակնիք . յանցաւորի պատժելու վճիռ .  
приговоръ .

Գատարկածուն . անորապ ձեռքով . ПУСТЫМИ

- руками. ( Գ Գ Գ Գ ) .
- Դեհաւուրց . փոքր, պղտիկ, տղայ .
- Դեսպան . ( է Լ Ճ Ի ) . посланникъ .
- Դէմք . երես . лицо .
- Դիմել . приобѣгнуть .
- Դիւրել . հեշտացնել . облегчить .
- Դրամ . փող, ըստակ . деньги .
- Ելակ . է պտուղ ինչ . клубника .
- Եղերդ . սալաթայ . салатъ .
- Եղջերաւոր . կոտոշով . рогатый .
- Եղջիւր . կոտոշ . рога .
- Երևակայութիւն . տեսած կամ չտեսած բանը միտքով՝ աչքին առաջն բերել . воображеніе .
- Երկիւղ . վախ . страхъ .
- Օւեշտութիւն . կատակ, յանազ . шутовство, проказы .
- Օբօնուլ, էկլեմիշ ըլլալ . забавляться .
- Օգօնութիւն . խելօքութիւն . благоразуміе .
- Օռարթ . ուրախ . веселый .
- Բնկղմիլ . պարթմիշ լինել . погрузиться .
- Բնտիր . լաւ, պատուական, գեղեցիկ, ջոկած . превосходный, изящный, избранный .

Թախծութիւն . տրտմութիւն . печаль.

Թանաք . (միւրեքեր) . чернило.

Թարմ . մատղաշ . (թաղայ) . свѣжій.

Թռչակ . (էլէֆէ) . пенсія.

Թուփ . ցած կամ կարճ ու փոքր ծառեր .  
кусть.

Ժպտալ . խնդալ . улыбаться.

Իղձ . ցանկութիւն . желаніе.

Իշխան . կնիեազ . князь.

Լօղիկ . վերարկու . վրայէ հագնելու շոր .  
мантія, шинель, салопъ.

Խահանոց կամ խոհանոց . կերակուր եփելու  
տեղ . (աշխանայ) . кухня.

Խարդախ . (այնաճի) . мошенникъ.

Խեղկատակութիւն . ծաղրածութիւն , զուար-  
ձախօսութիւն . шутовство, дурачество,  
болагурство, насмѣшка, проказы.

Խոհարար . կերակուր եփող . (աշէի) . поваръ.

Խորշիկ . (քօշա) . уголь.

Խնջոյք կամ խրախճան . (մէճլիս , գիաֆէթ) .  
балъ, пиръ.

Խստութիւն . անխիղճմտանքութիւն , քարա-  
ւիրտ ըլլալ . жестокосердіе, строгость.

Ծախք . (խարճ) . издержка, расходъ.

Ծեր . անդամ սինկղիտոսի . сенаторъ.

Ծերակոյտ . բարձրագոյն դատաստանարան տէրութեան . сенатъ (սենատ) սինկղիտոս .

Ծխնելոյղ . (օձագ) . печная труба.

Կալուածք . (միւլք) . помѣстье, имѣніе.

Կամակոր . խօսքի չ'եկող , իւր կամքը պաշտող . (ինատճի) . упорный, своенравный.

Կամուրջ . (քէօփիր) . мостъ.

Կառք . քառեթայ . карета.

Կատակ . յանագ , (շախայ , խօշտապ) . шутка.

Կարկաչեւ . թռչնոց կանչելը . каркать.

Կարկուտ . (բուրչախ) . градъ.

Կեղծամ . սուտ մաղ . парикъ.

Կեղծել սուտ չ'գիտցող ըլաւ . притвориться.

Կղզի . (ատայ) . островъ.

Կորովամիտ . առողջ դատողութիւն ունեցող . սուր միտքով . остроумный, здравомыслящій.

Համոզել . խօսք անցունել կամ խօսք հասկացնել . уговорить.

Հանդիսական . զիաֆէթի հրաւիրված մարդիկ . собраніе, пирующие.

Հանճարեղ . խելօք , благоразумный .

Հացկերոյթ . (զխաֆէթ) . пиръ .

Հեծուծիւն . անս անեւ կամ անս քաշեւ սրբ-  
տէն . ВДОХЪ .

Հետեանք . մէկ բանի տակէն՝ բան ելլելը .  
գր ասենք (այս բանի տակէն՝ լաւ բան  
դուրս չի գալ) . послѣдствіе .

Հերաթափ . մազը թափած . лысый .

Հիմն . (թեմեւ) основаніе , фундаментъ .

Հիւրանոց . հիւր ընդունելու սենեակ . гостин-  
ная .

Հմտութիւն . գիտութիւն . познаніе , искусство .

Հոյակապ . զեղեցիկ , փառաւոր . великолѣпный .

Հորթ . (պըզոյ) . կոյի պալա . телёнокъ .

Հոց . փուռ , սուլայ . печь .

Հպատակ . հրամանի կամ իշխանութեան տակ  
եղող . подданный .

Հսկողութիւն . վերակացութիւն . надзоръ .

Հրապարակական վաճառ . аукціонный торгъ .

Հրացան . թիւֆէնկ . ружьё .

Հրացանահար . թիւֆէնկով զարնված . стрѣлять .

Հրովարտակ . թագաւորական անունով գրած  
հրաման . (ֆէրման) . указъ .

Չանձախարիթ . մուր, (խոռոռմ). сажа.

Չանձրութիւն . (պեզարութիւն). скука.

Չեռնունայն . դատարկ, պօշ ձեռքով . съ пустыми руками.

Չու . հակիթ . яйцо.

Չաղաւտ . բաց ձակաւտ, կնտակ, տըպըղ .  
плѣшивый.

Չաշ . ցերեկվան կամ կէսօրվայ կերակուր .  
обѣдъ.

Չիկ . կամաց ձայն . невнятный или едва слыш-  
ный голосъ.

Չնձղուկ . թօրղայ (սէրչէ). воробей.

Մանրավէպ . առակի պէս կարճ պատմութիւն .  
анекдотъ.

Միայարկ . մէկ խաթ . одноэтажный.

Մոխիր . ծաղեկ (.քիւլ). зола.

Մորչ . բարակ չուպուխ . палочка.

Մտրակել . խամչիլամիշ անել . стегать.

Յամաւ . (ինաթճի). упрямый.

Յանազ . կատակ (շախայ, խօշտապ). шутка.

Յանդիման առնել . սոռճի հանել, ներկայա-  
ցնել . представлять.

Յանդիմանել . թաղիր անել . сдѣлать выговоръ.



Յանդուզն . չափազանց համարձակ , լիրբ .  
дерзкій.

Յարկ . խաթ , էթաթ . этажь.

Նախախայծ . առաջին հասած պտուղ . первый  
созрѣвшій.

Նախասենեակ . (հայեաթ) . передняя.

Նախընթաց . առաջիկէն զնացող կամ անցեալ .  
предъидущій.

Նաւահանդէս . շատ նաւեր ՚ի միասին . флотъ.

Նկատողութիւն . նայեցողութիւն . внимание ,  
разсмотрѣніе.

Նկարել . նախշել . расписать.

Շարունակ . անդադար . продолжительно.

Շրտուցանել . խրտեցնել , իուրթմիշ անել .  
испугать , пугнуть.

Շփոթ . (խալմախալ) . шумъ.

Շփոթել . վրդովել , խառնել . возмутить.

Ուղեկցութիւն . միասին մէկ տեղ երթալը .  
сопровождение . ուղեկցութեամբъ въ сопро-  
вождении.

Ուղղակի . շիմ — շիտակ . прямо.

Ուշ . միտք , մտադրութիւն . внимание.

Ուս . (օմուղ) . плечо.

Չորքոտանի . չորս ոտքէն գալող կենդանի .  
четвероногий.

Պահակեր . (խարաւուլ) . караулъ.

Պահարան . (տօլապ) . шкафъ.

Պաղատանք . սաստիկ աղաչանք . молюба.

Պաշտօն . պարտաւորութիւն , ծառայութիւն .  
служба.

Պատշգամբ . պալխոն . балконъ, крыльцо.

Պատուանդան . ոտքի տայեամայ . пьедесталь.

Պատուհան . լուսամուտ (բենձերէ) . окно.

Պարտէզ (բաղջայ) . садъ.

Զատագով . պաշտպանող , տէր կայնող . защит-  
никъ, адвокатъ.

Զւրմուղ . ջրի ձամբայ . каналъ.

Սայլ (արապայ) . телѣга, повозка.

Սանձել . զափտ անել . обуздать, укрощать.

Սապատ (սէփէթ) . корзина, лукошко.

Սառոյց (պուլ) . лёдъ.

Սեղանաւոր . ըստակ աւրող (սարրաֆ) . столъ-  
никъ.

Սենեակ (օտայ) . комната, кабинетъ.

Սովամահ . քաղցածութեամբ մեռնող .

Սպայ . զօրական մարդիկ (օֆիցեր) . офицеръ.

- Սպառնալ . վախ տալ . угрожать .  
Սպաս . աման , կաւաթ . приборъ .  
Ստոյգ . ճշմարիտ , հաստատ . дѣйствительно .  
Վանդակածև . խաֆէսի նման սուր ծայրով .  
рѣшотчатый , осколенный .  
Վերտառութիւն . վերնագիր . надпись .  
Վէճ կամ վիճարանութիւն (ճէնկ) . споръ , сло-  
вопреніе .  
Վիրաւորել . խոցել , ետրաւամիշ անել կամ  
սիրտ ցաւեցնել . ранить , огорчить .  
Վսեմական . փառաւոր . важный .  
Վտանգել . վնասել , զարար հասցունել . вре-  
дить .  
Վրդովել . խռովել , անհանգիստ առնել , տակ  
նուվերայ առնել . возмутить .  
Վրէժ . էօքէ . мщеніе .  
Վրէժխնդիր . էօքէ առնուլ . отмстить .  
Տաժանական . դժուար . трудный , тяжкій .  
Տաղտկացուցանել . պեղարեցնել . надоѣдать .  
Տանիք . մէկ շինուածքի կամ տունի թեփէ .  
կամ կտուր . кровля .  
Տապալել . զրջել . опрокинуть .  
Տառապանք . խեղճութիւն , (տէրա) . страданіе .

- Տառապեալ . խեղճ . страдалецъ .  
Տարբերութիւն . զանազանութիւն . различіе ,  
разность .  
Տարիածու . սիրահար , սիրող . любовникъ ,  
влюблённый .  
Տիտղոս . պատուանուն . титулъ .  
Տոհմ . ցեղ , (սոյ) . порода , фамилія .  
Տոմսակ . թեսկերէ . билетъ .  
Րոպէ . (թախէխ) . минута .  
Յուլ . պուղայ . быкъ .  
Յուցակ . (սիւրէթ) . списокъ .  
Փայտայել . սիրելու շփել , փէճ փէճ ասել .  
ласкать , приголубливать .  
Փեթակ . մեղուի սեփէթ . улей .  
Փողպատ . վզի կապոց , կալուստիկ . галстукъ .  
Քամակ . կոնակ . спина .  
Օտարոտի . խորթ անսովոր (խուճուս մուճուս) .  
странный .  
Օրհորդ . աղջիկ . дѣвица .

